

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի 2022 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի տարեկան գործունեության մասին (ըստ ոլորտների)

ՀՀՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԶՈՒԹՅԱՆ

Վայոց ձորի մարզպետարանի և մարզային ենթակայության պետական հիմնարկների և կազմակերպությունների 2022թ. տարեկան ֆինանսավորման ընթացքի վերաբերյալ

<<ՀՀ 2022թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանին 29 ծրագրերով 2022թ.-ի համար նախատեսվել են ծախսեր **4376533.0** հազ. դրամ գումար: Փաստացի ծախսը կազմել է 4312585.1 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել 98.5%-ով, որից

Ըստ ծրագրերի նախատեսվել և ֆինանսավորվել է...

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում. Ծրագիր 01-01-01-03:

2022թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 410364.4 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 409163.6 հազ.դրամ:
Ֆինանսավորումը կատարվել է 99.7 %-ով:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունում Ծրագիր 01-01-01-01:
2022թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 691.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 691.0 հազ.դրամ:

Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին. Ծրագիր 01-08-01-02:

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 55075.1 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել 55075.0 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

Մարզերին սուբվենցիաների տրամադրում . Ծրագիր 01-08-01-03:

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 1317201.9 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել 1280421.3 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 97.2 %-ով:

Մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ.

Ծրագիր 01-08-01-08

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 109154.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 108741.0 հազ.դրամ: Ֆինանսավորվել է 99.6%-ով:

Այլընտրանքային ծառայություն. Ծրագիր` 02-05-01-02:

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 30.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 30.0 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

Մշակույթ

Ըստ մշակույթի ոլորտի ծրագրերի 2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 22563.7 հազ.դրամ: Ֆինանսավորվել է 20599.7 հազ.դրամ: Ֆինանսավորվել է 91.3%-ով:

այդ թվում`

Պետական աջակցություն Թանգարաններին. Ծրագիր 08-02-02-01

Նախատեսվել է 16999.0 հազ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 16999.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 2792.6 հազ.դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում. Ծրագիր 08-02-03-02

Նախատեսվել է 2964.7 հազ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2964.7 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 494.0 հազ.դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Մշակութային միջոցառումների իրականացում. Ծրագիր 08-02-05-04

Նախատեսվել է 2600.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 636.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 24.5%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 106.0 հազ.դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Կրթություն

Ըստ կրթության ոլորտի ծրագրերի նախատեսվել է 2248684.9 հազ. դրամ, ֆինանսավորվել է 2233868.9 հազ. դրամ: **Ֆինանսավորումը կատարվել է 99.3%-ով:**

Հանրակրթական ուսուցման ծրագրեր-

Տարրական ընդհանուր կրթություն. Ծրագիր 09-01-02-01

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 808853.7 հազ. դրամ, ֆինանսավորվել է 808853.7 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

Հիմնական ընդհանուր կրթություն. Ծրագիր 09-02-01-01

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 982028.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 982028.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

Միջնակարգ ընդհանուր կրթություն. Ծրագիր 09-02-02-02

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 317116.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 317116.4 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Նախադպրոցական կրթություն ծրագիր' 09-01-01-01

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 18189.2 հազ. դրամ, ֆինանսավորվել է 18189.2 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում ծրագիր 09-01-01-02

2022թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 4552.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 1280.4 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 28.1%-ով:

Հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության շրջանակներում հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում ծրագիր' 09-06-01-09

2022թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 29167.8 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 23695.8 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 81.2 %-ով:

Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր' 09-05-01-02

2022թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 52450.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 52450.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%:

**Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում.
Ծրագիր 09-05-01-04**

2022թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 8715.4 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 8715.4 հազ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

**Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարներ.
Ծրագիր 09-06-01-23**

2022թ. պետական բյուջեով նախատեսվել է 4320.0 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 3844.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 89.0%-ով:

Ատեստավորման նոր համակարգի ներդրում ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը Ծրագիր 09-06-01-29

2022թ. պետական բյուջեով նախատեսվել է 9328.1 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 8351.5 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 89.5%-ով:

Հանրակրթական դպրոցների գույքով և տեխնիկայով ապահովում Ծրագիր 09-06-01-49

2022թ. պետական բյուջեով նախատեսվել է 3200.0 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 3200.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստում Ծրագիր 09-06-01-86

2022թ. պետական բյուջեով նախատեսվել է 9743.3 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 5124.1 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 52.6%-ով:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում՝ Ծրագիր 09-05-01-01

2022թ. պետական բյուջեով նախատեսվել է 1020.0 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 1020.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

**Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն
Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ նորոգում. Ծրագիր 04-05-01-03**

Նախատեսվել է 125000.0 հազ. դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 124938.9 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում. Ծրագիր 10-09-02-01

2022թ. պետական բյուջեով նախատեսվել է 87768.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 79055.7 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 90.1%-ով, թերի ֆինանսավորումը պայմանավորված է մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված փաստացի հայտերի հետ:

2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջեերով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 4 369 503.9 հազ. դրամ, որի աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 15.6% կամ ավել է պլանավորվել 590 922.9 հազ. դրամ: Տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից, 2022 թվականի 12 ամսվա ընթացքում, հավաքագրվել է 3 980 702.2 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 91.1%-ով, որի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 18.4 % կամ ավել հավաքագրված եկամուտները կազմում են 618 688.1 հազ. դրամ, որից սեփական եկամուտների՝ 2022 թվականի տարեկան պլանը 31.12.2022թ.-ի դրությամբ կազմում է 1 191 887.2 հազ. դրամ, փաստացի, հաշվետու ժամանակաշրջանում, հավաքագրվել է 1 101 339.6 հազ. դրամ կամ կատարվել է 92.4%-ով /, որի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 3.6 % կամ ավել հավաքագրված եկամուտները կազմում են 38 301.7 հազ. դրամ:

Ամփոփելով զանձապետական համակարգի տվյալները, 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջեերով նախատեսվել է.

- **Գույքային հարկեր անշարժ գույքից՝** 31.12.2022 թվականի դրությամբ տարեկան պլանավորվել է հավաքագրել 121 855.5 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 123 133.0 հազ.դրամ կամ կատարվել է 101.0%, աճը նախորդ տարվա, նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 10.8% կամ ավել է հավաքագրվել 11998.9 հազ. դրամ:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝** տարեկան պլանավորվել է հավաքագրել 299 931.5 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 299 181.8 հազ. դրամ, կատարվել է 99.8%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 11.2% կամ ավել է հավաքագրվել 30024.7 հազ. դրամ:

- **Տեղական տուրքեր**՝ տարեկան նախատեսվել է՝ 34 106.1 հազ.դրամ, հաշվետու ժամանակահատվածում փաստացի հավաքագրվել է 40 079.5 հազ.դրամ, կատարվել է 117.5%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրումը կազմում է 36.2% կամ 10648.5 հազ.դրամ:
- **Գույքի /հողի/ վարձակալություն**՝ տարեկան պլանավորվել է 416 811.1 հազ. դրամ, փաստացի 12 ամսում հավաքագրվել է 372796.6 հազ. դրամ, կատարվել է 89.4%-ով:
- **Տեղական վճարներ**՝ 2022 թվականի համար 31.12.2022թ-ի դրությամբ նախատեսվել է 238 462.2 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել 189 345.0 հազ. դրամ, կատարվել է 79.4%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրումը կազմում է 21.7% կամ ավել է հավաքագրվել 33 721.5 հազ. դրամ:

Աղբահանության վճար՝ տարեկան նախատեսվել է 82 891.4.4 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 57 100.2 հազ.դրամ կամ կատարվել է 68.9%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրումը կազմում է 6.3% կամ 3374.1 հազ. դրամ:

Համահարթեցման կարգով ՀՀ 2022թ-ի համար պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է տարվա համար 1 594 211.9 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

2022թ. ընթացքում Վայոց ձոր մարզի գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ

-2022 թվականին մարզում կատարված ցանքերը և ստացված բերքը.

Ընդամենը ցանքեր	3056հա
որից՝	
հացահատիկ և հատիկաընդեղեն	- 1011 հա / 1365.1 տոննա
բանջար բուստանային մշակաբույսեր	- 300 հա / 4682.5 տոննա
կարտոֆիլ	- 101 հա / 1261.7 տոննա
կերային մշակաբույսեր	- 1628 հա / 5162.5 տոննա
տեխնիկական մշակաբույսեր	- 16 հա / 133 տոննա

Բնական խոտհարքներից և անջրդի վարելահողերից կուտակվել է 18017.5 տոննա լեռնային խոտ:

Արտադրվել է՝ պտուղ և հատապտուղ	- 6062 տոննա
Արտադրվել է՝ խաղող	- 5406 տոննա
որից մթերվել է	- 3604 տոննա

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա անասնազվիաքանակը.

Խոշոր եղջերավոր կենդանիներ	- 18465 գլուխ
Ռրից՝	
կովեր	- 7675 գլուխ
մանր եղջերավոր կենդանիներ	- 15016 գլուխ
խոզեր	- 2041 գլուխ
մեղվաբնուսանիքներ	- 20193 փեթակ

Պետ պատվերով իրականացված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների քանակը.

բրուցելյոզ ի.ե.կ	- 17028 գլուխ,
բրուցելյոզ մ.ե.կ	- 12689 գլուխ
դաբադ ի.ե.կ	- 55844 գլուխ
դաբադ մ.ե.կ	- 6524 գլուխ
սիբիրախտ ի.ե.կ	- 31355 գլուխ
սիբիրախտ ձիերի	- 646 գլուխ
էմկար ի.ե.կ	- 34145 գլուխ
մաշկաբորբ ի.ե.կ	- 10336 գլուխ
լեյկոզ ի.ե.կ	- 158 գլուխ

2022 թվականին գյուղատնտեսության ոլորտում մարզում իրականացված պետական օժանդակության ծրագրեր.

- Տրամադրվել է 230 միավոր վարկ՝ 0.8 մլրդ դրամ
- Կառուցվել է 3 խելացի անասնաշենք
- Հիմնվել է 50.0 հա ինտենսիվ այգի
- Ձեռք է բերվել 7 միավոր գյուղ. տեխնիկա /լիզինգ/
- Փոխհատուցվել է 16 ապահովագրական պայմանագիր

Պետական օժանդակության ծրագրով մարզ է ներկրվել 312.95 տոննա ազոտական պարարտանյութ:

<<Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության>> ծրագրով 256 շահառու կատարել է 339.1 հա աշնանացան:

2022 թվականին մարզում իրականացված ներդրումային և դրամաշնորհային ծրագրեր.

1. <<Համայնքային ռեսուրսների կառավարման և մրցունակության>> (CARMAK-2) ծրագրով

կատարվել է .

- Արոտավայրերի ջրարբիացում, մակատեղիների և հովվի տնակների կառուցում՝ 217մլն.դրամ

- 20-80 տոկոս համաֆինանսավորմամբ ձեռք է բերվել 9 միավոր գյուղ. տեխնիկա՝ 49մլն. դրամի չափով:

2. Կազմակերպվել է <<Արաքս>> թոշնաֆաբրիկայի կողմից արցախյան պատերազմում զոհված, վիրավորված և անհետ կորած զինծառայողների և սոցիալապես անպահով ընտանիքներին բարեգործական հիմունքներով տրամադրված 17000 թև մեկ օրական ձտերի /2.4մլն դրամ/ հասցեական բաշխումը:

3. <<Դիակոնա>> բարեգործական ընկերության կողմից 5 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին տրամադրվել են մանր եղջերավոր կենդանիներ /5.2մլն. դրամ/:

Բնապահպանական ՀԿ-ների կողմից ներդրումներ ծրագրեր:

1.Բնության համաշխարհային հիմնադրամի Հայաստանյան գրասենյակ 11.2մլն / գյուղ.

տեխնիկայի համաֆինանսավորում, արևային ջրատաքաչուցիչ, փողոցային լուսավորություն/:

2.Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ 30մլն. դրամ /փողոցային լուսավորություն, խմելու և ոռոգման ջրագիծ, գյուղ. տեխնիկա, էլ. հովիվ/:

- ՀՀ կառավարության կողմից տրամադրված 24.2 մլն. ՀՀ դրամ գումարով կատարվել են Գետափ-Վերնաշեն ջրագծի վթարայի 29 հենասյունների վերանորոգման և փոխարինման աշխատանքները:

- ՄԱԿ-ի ծրագրով Արցախից տեղահանված ընտանիքներին տրամադրվել է 54 տոննա համակցված կեր ընդհանուր արժեքը- 11 800 000 ՀՀ դրամ:

Կոպիտ կերերի պակասը լրացնելու համար տրամադրվել է 350 կգ առվույտի սերմացու՝ 17 հա ցանքի համար և 860 կգ կորնզանի սերմացու՝ 4.5 հա-ի համար:

Վարչության կողմից ոռոգման սեզոնին 24 ժամյա ռեժիմով աշխատանքներ են տարվել գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու համար:

Ոռոգման սեզոնին <<Եղեգնաձոր>> ՋՕ-ի կողմից գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 11.307մլն մ³ ոռոգման ջուր, հասույթը կազմել է 124. 377 մլն դրամ, գանձվել է 134.1 մլն դրամ:

Մարզում՝ ՀՀ կառավարության և <<Եղեգնաձոր>> ՋՕ ընկերության կողմից ոռոգման համակարգերի նախագծման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում.

-Արենի համայնքի Ելփին բնակավայրի ջրամբարի կառուցման աշխատանքները գտնվում են նախագծման փուլում (0.9-1.0 մլն. խ.մ ջուր):

-Մալիշկա-Եղեգնաձոր ջրանցքի (երկարությունը 2 կմ) հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են.

Որից՝ ԼՌ 60 վաքերի փոխանակում նորով-620 գծմ.

Ջրանցքի բետոնային երեսապատում-600գծմ.

Դ-500 մմ պոլիէթիլենային խողովակի տեղադրում-780գծմ.

Շատին-Գետափ ջրանցքի (1480գծմ.) հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են.

Որից՝ ջրանցքի ԼՌ 80 վաքերի փոխարինում նորով-780գծմ.

Ջրանցքի բետոնային երեսապատում-700գծմ.

Գետափ-Արփի ջրատարի հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են.

Պոլիէթիլենային խողովակի տեղադրում-5060 գծմ.

2020 թվականի 44-օրյա պատերազմի, հետպատերազմյան և 2022 թվականի սեպտեմբերի 12-14-ը ընկած ժամանակահատվածում՝ աղբբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի հետևանքով գյուղացիական տնտեսություններին

սեփականության իրավունքով պատկանող գույքին հասցված վնասի փոխհատուցում.

ՀՀ Վայոց ձոր մարզում՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի, հետպատերազմյան և 2022 թվականի սեպտեմբերի 12-14-ը ընկած ժամանակահատվածում՝ աղբբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի հետևանքով գյուղացիական տնտեսություններին սեփականության իրավունքով պատկանող գույքին հասցված վնասի չափը կազմում է՝ 18 730 000 ՀՀ դրամ, որից փոխհատուցվել է 13 728 000 ՀՀ դրամ, կամ 73.3%-ի չափով:

Հեռագնա արոտավայրերի արդյունավետ և նպատակային օգտագործում:

Մարզում առկա է 92204 հեկտար արոտավայր, որից օգտագործվում է 34. 316.38 հեկտարը (մոտ 37.2%):

2022թ ամառվա ընթացքում Արարատի, Արմավիրի և Սյունիքի մարզերից Եղեգիս, Վայք և Ջերմուկ համայնքների ամառային արոտավայրեր են բերվել մոտ 27 000 գլ մանր և 5000 գլ խոշոր եղջերավոր կենդանիներ:

- 2022 թվականին Վայրի և գիշատիչ կենդանիների, մասնավորապես արջի կողմից մարզի Արենի, Եղեգնաձոր, Վայք, Եղեգիս, Ջերմուկ համայնքներում հասցվել է շուրջ 7.128 մլն. ՀՀ դրամի վնաս:

- Մայիսի 7-ին և 16-ին Արենի համայնքի Աղավնաձոր և Վայք համայնքի Արին բնակավայրերում, տեղացած կարկուտի հետևանքով վնասվել է 320.7 հա պտղատու և

խաղողի այգիներ՝ վնասը կազմել է 468 մլն. դրամ:

- Վարչության կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետի մոտ կազմակերպվել է Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի և <<Ռազմավարական

զարգացման գործակալություն>> ՀԿ-ի հետ համատեղ մարզի Եղեգիս համայնքի Հերմոն,

Շատին և Եղեգիս բնակավայրերում իրականացվող՝ <<Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար>> ծրագրի սկզբնական փուլի քննարկմանը,

որը ֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության կողմից:

- <<Բարվա>> ինովացիոն կենտրոնի մասնագետների հետ կազմակերպվել է հակակարկտային կայանների շահագործման թեմայով ուսուցողական և դաշտային սեմինար պարապմունք, որին մասնակցել են համայնքների գյուղատնտեսները և հակակարկտային կայանները շահագործող պատասխանատու անձինք:

Կազմակերպվել է սեմինար <<Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն կայուն օգտագործում Հայաստանում՝ Եվրոպական միության չափանիշներին համապատասխան>> Թվինինգ ծրագրի շրջանակներում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Չեխիայի Հանրապետության բնության պահպանության

գործակալության և Ֆինլանդիայի բնապահպանության ինստիտուտի մասնագետների կողմից :

Բնապահպանություն.

- Քննարկվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ / Բնապահպանություն / Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին բնապահպանական փորձական եզրակացության ստացման հայտը (ԲՓ) Ջերմուկ քաղաքի Ջրվեժի մոտեցման ճանապարհի, ճեմուղիների մայթերի վերականգնում, կամրջակի վերակառուցում աշխատանքների հայտը և տրվել է դրական դիրքորոշում :
- Քննարկվել է «Մալիշկա Ռեսուրսիս» ՍՊԸ-ի Վայոց ձորի մարզի Սպիտակասարի կրաքար հանքերակումում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը և տրվել է դրական դիրքորոշում :
- Քննարկվել է ՈՇրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին շշ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին շշ օրենքի նախագծը տրվել է դրական դիրքորոշում:
- Քննարկվել է «ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի Վայոց ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ IV-k հորատանցքի, հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ծավալի ավելացման աշխատանքների հայտը և տրվել է դրական դիրքորոշում:
- Քննարկվել է «Ադամանդ-Կ» ՍՊԸ-ի՝ Վայոց ձորի մարզի Ջերմուկի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի «Սարահարթի» և «Կիրճի» տեղամասերի թիվ 30/62, 24/62 և 2/61 հորատանցքերի ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակը և տրվել է դրական դիրքորոշում:
- Քննարկվել է «Հայցյուղշիննախագիծ» ՍՊԸ –ի կողմից ներկայացված Արփի-Գետափ ոռոգման ջրագծի վերականգնման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և տրվել է դրական դիրքորոշում:
- Քննարկվել է «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊ ընկերության Վայոց ձորի մարզի Գնիշի քվարցիտների հանքավայրի Փալի տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների հայտը տեխնիկական առաջադրանք ստանալու նպատակով և տրվել է դրական դիրքորոշում:

Շշ Վայոց ձորի մարզում 2022 թվականի քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ և Ասիական բանկի կողմից տրամադրված վարկային միջոցներով «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով» կառուցվում է Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի նոր շենքը: Պայմանագրային գումարը կազմում է 1.228 մլն. դրամ: 2022 թվականի իրականացվել են 388.4 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

2. Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ-պետական հիմնարկի պատվիրատվությամբ համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող

«Հիվանդությունների կանխարգելումն վերահսկում» վարկային 5222-ԱՄ ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր համայնքում կառուցվում է հիվանդանոցի նոր շենք, որի պայմանագրային գումարը կազմում է 2032.0 մլն. դրամ: 2022 թվականին կատարվել է 874.0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

3. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջոցներով իրականացվել է Միկոյան և Մոմիկի փողոցների ջրամատակարարման բարելավման աշխատանքներ: Ընդ.՝ 30.960 մլն. դրամ:

4. «Ջիէջէմ-ԱՐՄԵՆԻԱ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է Վայոց ձորի Արենի համայնքի մանկապարտեզի կառուցման աշխատանքներ: Ընդ. գումարը՝ 577.160 մլն. դրամ: 2022 թվականի իրականացվել են 67,0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

5. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից կառուցվում է մարզում մոդուլային 3 նոր դպրոցներ՝

ա) Եղեգիս բնակավայրի միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցում: Նախահաշվային արժեքը կազմում է 706.0 մլն. դրամ: 2022 թվականին կատարվել է 210.0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

բ) Չիվա բնակավայրի նոր դպրոցի կառուցման նախահաշվային արժեքը կազմում է 713.1 մլն. դրամ: 2022 թվականի կատարվել է 95.0 մլն. դրամի աշխատանքներ:

գ) Գոմք բնակավայրի նոր դպրոցի կառուցման նախահաշվային արժեքը կազմում է 652.7 մլն. դրամ: 2022 թվականին կատարվել է 260.0 մլն. աշխատանքներ:

Համայնքային բյուջեների միջոցներով կատարվել է 54.82 մլն. դրամի աշխատանքներ: Մարզում կատարվել են ընդամենը 1980,18 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

2022թ. սեպտեմբերի 13-14 հայ-ադրբեջանական սահմանին ադրբեջանական ազրեսիայի հետևանքով ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքին պատճառված վնասների դիմաց, համայնքի ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել է 31,977 մլն.դրամի փոխհատուցում:

2022թ. սուբվենցիոն ծրագրեր

ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել է 27 ծրագիր՝ 3 մլրդ 825,7 մլն ՀՀ դրամ արժողությամբ, որից 1 մլրդ 685,9

մլն. ՀՀ դրամը կամ 44,1 %-ը համայնքների ներդրումն է, 2 մլրդ 139,7 մլն. ՀՀ դրամը կամ 55,9 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:

Ջրամատակարարման, ջրահեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման

համակարգեր:

Ընկերության բաժանորդների թիվը 9494 է, որից 767-ը իրավաբանական կազմակերպություններ:

2021 թ-ի համեմատ բաժանորդների թիվը 2022 թ-ին ավելացել է 130 բաժանորդով, որից 6-ը իրավաբանական կազմակերպություններ:

Մարզի մյուս բնակավայրեր ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից:

Գազաֆիկացում

Վայոց ձորի մարզի 5 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17 բնակավայր: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված բնակավայրերի գազաֆիկացումը: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ազգաբնակչության հետ այլընտրանքային էներգետիկ համակարգերից օգտվելու համար:

Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 9056 է, որից 4424-ը բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, 4356 անհատական տներ և 276 իրավաբանական կազմակերպություններ: 2022 թվականի ընթացքում տեղադրվել է 129 անվտանգության ազդանշանային սարքեր:

Հաշվետու տարում բնական գազի շահագործման ընթացքում արտակարգ դեպքեր չեն արձանագրվել:

Ճարտարապետության բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում քաղաքաշինության վարչության կողմից ուսումնասիրվել և լիազոր մարմին է ուղարկվել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներում նախագծման թույլտվություն պահանջող համայնքի ղեկավարների կողմից ներկայացված քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթներ: Ուսումնասիրման փուլում մերժվել և լրանշակման է բերադարձվել 2 փաթեթ:

ՀՀ ՏԿԵ նախարարի ներկայացրած օրենքի և որոշման նախագծերը քննարկվել և տրվել է կարծիք:

Կատարվել է բնակավայրերում հողի նպատակային նշանակության փոփոխության աշխատանքներ: Քաղաքաշինության վարչությունը համայնքներից ստացել է հողամասի գործառնական նշանակության փոփոխության առաջարկներ, որոնք ուսումնասիրվել է տեղում և տրվել համապատասխան կարծիք:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գրության համաձայն համայնքներին է տրամադրվել „Հայնախագիծ“ կազմակերպության կողմից մշակված միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի վերջնական մշակված տարբերակները՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով :

Ի կատարումն ՀՀ կառավարության 2006թ. թիվ 346-ն որոշման վարչության կողմից համակարգվել են որոշման հավելվածներում առկա պետական գույքի գրանցման և կոմիտեին հանձնելու աշխատանքները: «Արփա-Սևան» ԲԲԸ-ի գույքը ՀՀ-ին նվիրատվություն տալու գործընթացում կատարվել է կազմակերպչական աշխատանքներ :

Աշխատանքներ են կատարվել համայնքներում կադաստրային հասցեների ճշտման բնագավառում:

Աջակցվել և համակարգվել է Եղեգիս համայնքում մոդուլային մանկապարտեզի հողհատկացման գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքաշինության վարչությունը համայնքներից ստացել է 196 շինթույլտվություններ, որոնք հաշվառել են և ամսական կտրվածքով հաշվետվություն է ներկայացվել ՀՀ ՏԿԵՆ:

2022 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում կատարված աշխատանքների վերաբերյալ

2022թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել է 239 կմ ճանապարհների ձմեռային և 102.8կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 277.9 մլն. դրամ, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում 137.8կմ ձմեռային և 56.4կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 125.0 մլն. դրամ:

2021 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել էր իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Մ-2՝ Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի - Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ98.0 - կմ101.4 հատվածի հիմնանորոգում (3.4կմ) - 600.0 մլն. դրամ:

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների կառուցման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2022թ.:

Աշխատանքներն ավարտվել են:

2.Մ-2՝ Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ108.4-կմ126.1 հատվածի հիմնանորոգում (17.7կմ) - 3.000 մլն. դրամ:

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների եզրաքարերի տեղադրման, մայրերի կառուցման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2022թ.:

Աշխատանքներն ավարտվել են:

3. Մ-2՝ Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ150.7 - կմ167.6 հատվածի հիմնանորոգում - 2 801.8 մլն. դրամ:

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների երթևեկելի մասի նախապատրաստական, ջրահեռացման խողովակների տեղադրման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2022թ. օգոստոս:

Աշխատանքներն ավարտվել են:

4. Մ-10՝ Սևան – Մարտունի - Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ122 - կմ124 հատվածներում հողային պաստառի փլուզված հատվածների պաշտպանիչ հենապատերի և կառուցվածքների վերականգնում - 58.8 մլն. դրամ:

Աշխատանքներն ավարտվել են

5. Մ-10՝ Սևան - Մարտունի - Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 123+500 հատվածում վերգետնյա հետիոտնային անցման կառուցում

- 54.5 մլն. դրամ:

Աշխատանքների ավարտը՝ 2023թ.:

6. (Մ-2) - Նորավանքի պատմական հուշարձան (8.1կմ) ավտոճանապարհի հիմնանորոգում - 620.0 մլն. Դրամ:

Աշխատանքներն ավարտվել են:

7. (Մ-2) - Հերիեր - Կարմրաշեն ավտոճանապարհի (8.7 կմ) հատվածի հիմնանորոգում - 814.0 մլն. դրամ:

2022 թ կատարվել է 667.4 մլն. դրամի աշխատանք:

Աշխատանքների ավարտը՝ 2023թ.:

8. Հ 43՝ Մ-2 - Գնդեվազ - Ջերմուկ - Արցախի սահման կմ 0+000 - կմ23+754 (23.754 կմ) հատվածի միջին նորոգում -762.6 մլն. Դրամ:

Կատարվել է 739 մլն. դրամի աշխատանք:

Աշխատանքներն ավարտված չեն:

9. Մ-10՝ Սևան - Մարտունի - Գետափ կմ 108+800 - կմ124+000 /15.2 կմ/ հատվածի միջին նորոգում -729.3 մլն. Դրամ:

Աշխատանքներն ավարտվել են:

2022թ. ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամով իրականացվել են հետևյալ աշխատանքները

1.Ջերմուկ բնակավայրի Ձախափնյակ թաղամասի Մաշտոցի և Ազատամարտիկների փողոցների վերանորոգում և բարեկարգում - 679.2 մլն. դրամ:

Կատարվել է 60 մլն. դրամի աշխատանք:

Կա նախագծի վերանայման խնդիր:

Աշխատանքների ավարտը՝ 2023թ.

2. Ջերմուկ բնակավայրի Շահումյան, Վարդանյան, Մյասնիկյան, Ադամյան և Չարենցի փողոցների վերանորոգում, և վերականգնում և „Քարայծ տանող ճեմուղու կառուցում” - 794.3 մլն. դրամ:

2022 թ կատարվել է 356.7 մլն. դրամի աշխատանք:

Աշխատանքների ավարտը՝ 2023թ.

Տարբեր ծրագրերով նախատեսված աշխատանքներ

Ընդամենը՝ 9 306.6 մլն. դրամ:

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմարիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով:

2022թ. ընթացքում կազմվել և ներկայացվել է 2023 - 2025թթ. մարզային (տեղական) և համայնքային նշանակության ավտոճանապարհների, կամուրջների հիմնանորոգման, ինչպես նաև մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսական հայտը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանների, ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշումների և կարգադրությունների պահանջներով, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության՝ աշխատանքային ծրագրերին համապատասխան՝ կազմակերպելով մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունն իր աշխատանքները նպատակաուղղել է՝ ապահովելու մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթություն ստանալու հավասար պայմանների, մատչելիության և համակարգի արդյունավետ գործունեության ապահովմանը: Վարչությունն իր աշխատանքային գործունեության ընթացքում համագործակցել է մարզում գործող հանրապետական և համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների հետ:

Կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում է մարզային ենթակայությամբ 45 և նախարարության ենթակայությամբ 3 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, 3 մարզային մշակութային հիմնարկների գործունեությունը: Աջակցում է համայնքային ենթակայությամբ գործող մշակութային և մարզական հաստատությունների օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու գործընթացին:

Ոլորտի պետական քաղաքականությունը մարզում իրականացնելու նպատակով՝ վարչությունը համագործակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, նրա առանձնացված կառույցների հետ (կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ), գնահատման և թեստավորման կենտրոն (ԳԹԿ), կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ), դասագրքերի և տեղեկատվական համակարգերի շրջանառու հիմնադրամ (ԴՏՀՇՀ), կրթության տեսչական մարմին և այլն):

Մարզում գործում են 1 կրթահամալիր, 2 առանձնացված ավագ, 31 միջնակարգ և 14 հիմնական դպրոցներ:

Մարզային ենթակայության 45 հանրակրթական դպրոցներում 2021-2022 ուստարում կրթություն է ստացել 5984 աշակերտ:

2021-2022 ուստարվա 9-րդ դասարանի շրջանավարտների թիվը՝ 536 է, 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը՝ 256:

2021-2022 ուստարում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ Վայոց ձորի մարզում գործող 3 դպրոցներում (Եղեգնաձորի ավագ դպրոց, Վայքի ավագ դպրոց, Ջերմուկի կրթահամալիր) հաճախել է 812 աշակերտ:

2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակում մարզային ենթակայության 45 հանրակրթական դպրոցներում կրթություն է ստանում 5944 աշակերտ, իսկ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության 3 դպրոցներում՝ 784 աշակերտ:

Պետական միասնական քննությունները կազմակերպելու համար քննական կենտրոն է ընտրվել Եղեգնաձորի ավագ դպրոցը: 2022 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար դիմում-հայտ է ներկայացրել մարզի հանրակրթական դպրոցների 116 շրջանավարտ: Դիմորդներից 89-ը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Մարգային ենթակայության 45 դպրոցում աշխատում է 938 ուսուցիչ, այդ թվում կին՝ 756, տղամարդ՝ 182:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով:

Մարզի 48 դպրոցներից 20-ը ջեռուցվում է գազի լոկալ կաթսայատան միջոցով, 1-ը (Խաչիկի միջն.) կոշտ վառելիքով աշխատող լոկալ կաթսայատան միջոցով, մնացած 27 դպրոցները՝ էլեկտրական ջեռուցիչներով:

Մարզի դպրոցական շենքերի և շինությունների պահպանումը և շահագործումը՝ հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում է ՀՀ կառավարության և Վայոց ձորի մարզպետարանի ուշադրության կենտրոնում, և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալները ավելանում են:

Նոր կառուցվող դպրոցներ՝ Գումֆի, Եղեգիսի, Չիվայի միջնակարգ և Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցներ:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները: Օլիմպիադայի մարգային փուլին մասնակցել է 385 աշակերտ, որոնցից 45-ը մասնակցել են հանրապետական փուլին: Հանրապետական փուլում «Մաթեմատիկա» առարկայի 2-րդ կարգի դիպլոմի է արժանացել 1 աշակերտ, «Ռուսաց լեզու» առարկայի 3-րդ կարգի դիպլոմի՝ 1 աշակերտ:

Մարզի բոլոր դպրոցներն անցել են համընդհանուր ներառական կրթության: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Մարզում գործում է տարածքային մանկավարժաժողովրդական աջակցության կենտրոն:

Կրթության կառավարման արդյունավետության բարձրացման համար մարզի 7 դպրոցներում ստեղծվել են առանձին գործող կոլեգիալ կառավարման մարմիններ՝ խորհուրդներ, իսկ մնացած դպրոցներում ստեղծվել են միացյալ 13 խորհուրդներ:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից և ՀՀ կառավարության մասնակցությամբ ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցներում իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը:

Ուսումնական տարվա ընթացքում «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից իրականացվել է մարզի դպրոցների խոհարարների վերապատրաստում: Կազմակերպվել են տեսական և գործնական դասընթացներ:

Տաք սնունդ տրամադրող դպրոցների խոհարարները ապահովվել են համապատասխան համազգեստներով, ճաշացանկերով և տեխնոլոգիական քարտերով:

Մարգային ենթակայության 45 դպրոցների 2-4-րդ դասարաններում դասավանդվում է ՈՇախմատ՝ առարկան: Դպրոցներում առարկան դասավանդում են վերապատրաստման դասընթացներ անցած ուսուցիչներ: Դպրոցներն ունեն շախմատի դասասենյակներ, որոնք ապահովված են համապատասխան գույքով և դիդակտիկ պարագաներով:

Տարվա ընթացքում այցելություններ են կատարվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգման, դպրոցավարության անհրաժեշտ փաստաթղթերին և գործառույթներին ծանոթանալու, անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցություն տրամադրելու նպատակով:

Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակն էականորեն կախված է մանկավարժական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և

հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվել է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը:

Մարզի ուսումնական հաստատություններում աշխատում են ՀՀ Վայոց ձորի մարզպետի շնորհակալագրերի և պատվոգրերի արժանացած շատ ուսուցիչներ:

Որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: Առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցութային կարգով: Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի պակասը լրացնելու նպատակով՝ համագործակցել ենք «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ:

Համագործակցության արդյունքում երկու տարի ժամկետով Վայոց ձոր գործուղվեց 10 ուսուցիչ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հաջողության գրավականը անշուշտ ուսուցման և դաստիարակության ճիշտ գույակցումն է:

Տարվա ընթացքում Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ:

Դպրոցներում հաճախակի կազմակերպված գեղեցիկ և բազմաբովանդակ միջոցառումները, հետաքրքիր բաց դասերը, նկարչական ցուցահանդեսները, երաժշտական փառատոները, ազգային տոներին, հորեյանական տարելիցներին նվիրված հանդիսությունները, տարաբնույթ, բազմաբովանդակ միջոցառումները մեծապես նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Արխանգելսկի մարզի միջև կնքված համագործակցության համաձայնագրի համաձայն երիտասարդական պատվիրակությունների փոխանակման ծրագրի շրջանակներում Վայոց ձորի մարզից պատվիրակություն է մեկնել գործընկեր Արխանգելսկի մարզ, որտեղ մեկնարկել է հետաքրքիր խմբակներով և նախաձեռնություններով հագեցած համատեղ ուսումնաճանաչողական ճամբարը:

Նույն ծրագրի շրջանակներում ամռանը կազմակերպվել էր Արխանգելսկի մարզի երիտասարդական պատվիրակության այցը Վայոց ձորի մարզ:

Երեխաներին դպրոցին նախապատրաստելու համար անգնահատելի է նախադպրոցական հաստատությունների դերը: 2021-2022 ուսումնական տարում նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված են եղել 1441 երեխաներ, որից 1265-ը 17 մանկապարտեզներում, իսկ 176-ը՝ դպրոցներում գործող նախակրթարաններում:

Մանկապարտեզներից 12-ը հիմնանորոգված են (Եղեգնաձորի 2, Եղեգնաձորի 5, Վայքի 1, Վայքի 3, Ջերմուկի «Զատիկ», Գնդեվազի, Զառիթափի, Գլաձորի, Գետափի, Արփիի,

Աղավնաձորի, Ռինդի), մյուսներն՝ (Եղեգնաձորի 1, Ագարակաձորի, Մալիշկայի թիվ 1, Մալիշկայի թիվ 2, Վերնաշենի) ունեն վերանորոգման և կահավորման կարիք:

ՄՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՅԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
2022թվական

N	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Անցկացման վայրը	Մասնակիցների թիվը
1	«ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշար	Մարտի 12-13-ը /Եզրափակիչ փուլ/	Ք. Չարենցավան	3 տղամարդ 3 կին
2	«ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշար	Մայիսի --28	Շորժա-Սևանա լիճ թերակղզի	
3	«ՀՀ Վարչապետի գավաթ» խճուղային կրոսավազքի սիրողական մրցաշար	Սեպտեմբերի 19-21	Փարաքար-Էջմիածին	
4	ՀՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ դասարանների աշակերտների միջև «Մպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում	1-ին փուլ փետրվար 2-րդ փուլ մարտի 28-30 3-րդ փուլ ապրիլի 19-21 4-րդ փուլ մայիսի 6 - 8	Դպրոցներ Համայնքային Մարզային Եզրափակիչ ք.Գյումրի	5տղա,5աղջիկ 5տղա,5աղջիկ 5տղա,5աղջիկ 2 ներկայացուցիչ
5	ՀՀ հանրակրթական դպրոցների 4-6-րդ դասարանների աշակերտների միջև «Մպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում	1-ին փուլ փետրվար 2-րդ փուլ մարտի 28-30 3-րդ փուլ ապրիլի 19-21 4-րդ փուլ մայիսի 13 -15	Դպրոցներ Համայնքային Եզրափակիչ ք.Վանաձոր	5տղա,5աղջիկ 5տղա,5աղջիկ 5տղա,5աղջիկ 2 ներկայացուցիչ

6	ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակի հաղախի անցկացում	Հրաձգություն 19-20.04 Հնգամարտ 17-19.05 Բազկամարտ 27-29.04 Մինի ֆուտբոլ 11-13.04 /միջմարզային Մինի ֆուտբոլ 17-20.05 /եզրափակիչ/ Բասկետբոլ 18-20.10 /միջմարզային/ Բասկետբոլ 01-05.11 /եզրափակիչ/ Շախմատ Վոլեյբոլ 11-13.10 /միջմարզային/ Վոլեյբոլ 14-18.11 /եզրափակիչ/ Սեղանի թենիս 1-3.11	Ք. Երևան Ք. Երևան Ք. Երևան Ք. Եղեգնաձոր Երևան Ք. Վայք Ք. Երևան Ք. Երևան Ք. Երևան Վայք Ք. Երևան	4տղա, 4աղջիկ 5տղա, 5աղջիկ 6տղա, 4աղջիկ 10 տղա 10-տղա 10տղա, 10աղջիկ 10տղա, 10աղջիկ 2տղա, 2 աղջիկ 10տղա, 10աղջիկ 10տղա, 10աղջիկ 3 տղա, 3աղջիկ
7	Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում:	1-ին փուլ 25.09 2-րդ փուլ/տարածաշրջ/ 4-7.10 3-րդ փուլ 18-19.10 /մարզային 4-րդ փուլ 25—28.10 /եզրափակիչ/	Ներդպրոցական Վայք, Եղեգնաձոր Ք. Եղեգնաձոր Ք. Արմավիր	9 տղա 9 տղա 9-տղա
8	Խճուղավազք	Տարվա ընթացքում	Մալիշկա, Վայք Ռինդ-Չիվա	
9	«Սպորտային օր»	Ապրիլի 22-ին	Մարզի հանրակրթ. դպրոցներում	
10	«Մինի ֆուտբոլի հուշամրցաշար՝ նվիրված 44-օրյա պատերազմում զոհված հերոսների հիշատակին	Հոկտեմբերի 14-16	Գլաձոր	
11	«Վազքի օր»	Սեպտեմբերի-17-ին	Դպրոցներ և համայնքներ	
1.	«ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական խճուղավազքի մարզային մրցաշար	09.09.2022	Մալիշկա	
2.	«ՀՀ Վարչապետի գավաթ»	20.09.2022	Փարաքար-	

	սիրողական խճուղավագրի հանրապետական մրցաշար		Էջմիածին	
3.	Ռոման Բերեզովսկու անվան ֆուտբոլի պատանեկան մրցաշար	09.11.2022	Վայք «Արևիկ» մարզադաշտ	
4.	Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր ա) տարածաշրջանային փուլ բ) մարզային փուլ գ) եզրափակիչ փուլ	4-7.10.2022 18-19.10.2022 25-28.10.2022	Եղեգնաձոր, Վայք Եղեգնաձոր Ք. Արմավիր	
5.	Մինի ֆուտբոլի հուշամրցաշար՝ նվիրված արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին	14-16.10.2022	Գլաձոր	
6.	7-12 ըդ դասարանների սպարտակիադայի ծրագիր: Բասկետբոլ (մարզային փուլ)	23-24.09.2022	Վայք	
7.	Բասկետբոլ (միջմարզային փուլ)	19-20. 10.2022	Վայք	
8.	Վոլեյբոլ (մարզային փուլ)	3-4. 10.2022	Եղեգնաձոր	
9.	Վոլեյբոլ (միջմարզային փուլ)	11-12.10.2022	Եղեգնաձոր	
10.	Սեղանի թենիս (մարզային փուլ)	20-21. 10.2022	Վայք	
11.	Սեղանի թենիս (եզրափակիչ փուլ)	01-03. 11.2022	Երևան	
12.	Ազգային ժողովի գավաթ (մարզային փուլ) (եզրափակիչ փուլ)	Հոկտեմբեր, նոյեմբեր	Եղեգնաձոր, Վանաձոր	

«ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային սիրողական խճուղավագրի մրցաշարի եզրափակիչ փուլում 2-րդ մրցանակային հորիզոնականը զբաղեցրել են Արենիի միջնակարգ դպրոցի աշակերտները:

Նոյեմբերի 9-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հետ համագործակցությամբ և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (ՀՖՖ) և «Ռուսական տուն» Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտում անցկացվեց Ռոման Բերեզովսկու անվան ֆուտբոլի մանկապատանեկան մրցաշար:

Եղեգնաձորի մարզադպրոց	Ֆուտբոլ-2 խումբ վոլեյբոլ- 2 խումբ ըմբշամարտ-2 խումբ սեղանի թենիս-1 խումբ
ՔՋերմուկի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն՝ ՀՈԱԿ	բոնցքամարտ-1 խումբ քիք-բոքսինգ-1 խումբ Ֆուտբոլ-2 խումբ շախմատ-1 խումբ
Մալիշկայի մարզադպրոց	ըմբշամարտ-3 խումբ Ֆուտբոլ- 2 խումբ
Վայքի մարզադպրոց	վոլեյբոլ-2 խումբ Ֆուտբոլ-4 խումբ կարատե-2 խումբ Ֆիտնես-1 խումբ բասկետբոլ-1 խումբ

Վայոց ձորի մարզում գործում են համայնքային ենթակայությամբ 4 մանկապատանեկան մարզադպրոցներ՝ Եղեգնաձորի, Մալիշկայի, Վայքի մարզադպրոցներ և Ջերմուկի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն:

Մշակույթի բնագավառ

Մարզում գործում են երկու թանգարաններ՝ «Գլաձորի պատմամշակութային արգելոց թանգարան» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան՝ մարզային ենթակայությամբ: Գերատեսչական ենթակայությամբ երկու պատկերասրահ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում, երաժշտական դպրոց մարզային ենթակայությամբ, և չորս արվեստի դպրոցներ համայնքային ենթակայությամբ՝ Վայք, Ջերմուկ (Ջերմուկի Ազնավուրի անվան և Ջերմուկի Մելիքյանի անվան արվեստի դպրոցներ), Արենի համայնք գ. Աղավնաձոր:

Մշակութային քաղաքականություն իրականացնող կազմակերպությունների հետ մշակվել են պլաններ, իրականացվել են համատեղ ծրագրեր: Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման, ազգային արժեք համարվող մշակութային և ոչ նյութական ժառանգությունների պահպանման, տարածման և զարգացման ուղղությամբ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ կազմվել և իրականացվել են հետևյալ ծրագրերը:

1. Մարզի հուշարձանների վերաբերյալ դաս-գրույցներ, դասախոսություններ և կրթական այլ ծրագրերի կազմակերպում հուշարձանների տարածքներում և ուսումնական հաստատություններում:

2. Մարզի հուշարձանները պատկերող նկարչական աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպում՝ ներգրավելով դպրոցների բարձր դասարանների աշակերտներին:

3. «Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր» (ՊՈԱԿ-ի տրամադրած նյութերով) միջոցառում՝ «Հուշարձանները մեր պատմության լուռ վկաներն են» խորագրով,

Արտավան համայնքում բաց դաս՝ մարզի հուշարձանների վերաբերյալ, տարածքի հուշարձանների մաքրման աշխատանքներ ՏԻՄ ներկայացուցիչների և գյուղի բարձր դասարանների աշակերտների մասնակցությամբ:

4. Դեպի մեր պատմության հուշարձանները՝ արշավ Ագարակաձորի բարձր դասարանների աշակերտների մասնակցությամբ, դեպի համայնքում գտնվող բերդի տարածք: Տարածքի հուշարձանների վերաբերյալ ավանդապատումների ներկայացում և զրույցների անցկացում:

Կազմակերպվել է պատմամշակութային ժառանգության պահպանության առկա խնդիրների վերհանման, համատեղ քննարկման և լուծման նոր մոտեցումներին նվիրված՝ «Պատմամշակութային ժառանգություն և հանրահռչակում. Փորձ և նոր մոտեցումներ» խորագրով կլոր-սեղան քննարկում՝ պետական կառավարման և ՏԻ մարմինների, պետական գերատեսչությունների մարզային ներկայացուցիչների, հանրային ծառայությունների մատուցման, սպասարկման, զբոսաշրջային ոլորտի ղեկավարների ու ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ստորև ներկայացվում է մարզային ենթակայությամբ գործող Եղեգնաձորի մշակույթի կենտրոնի, Եղեգնաձորի երաժշտական դպրոցի և Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի 2022 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

«Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ

1. **14.04.2022թ.** - Կրկեսային ուրախ ծրագիր՝ աճպարարների, ծաղրածուների, վարժեցրած կենդանիների, ակրոբատների, էկվիլիբրիստների և Քեռի Մուլտիկինիկի մասնակցությամբ:

2. **22.04.2022թ.** - «Քեռի Մուլտիկինիկի նկարչական կրկեսային հյուրախաղերը Եղեգնաձորում» ինտերակտիվ շոու ծրագիր

3. **23.04.2022թ.** - Ջահերով երթ-մոմավառություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցին

4. **08.05.2022թ.** - TCF-ի «Formula Yeghegnadzor» կոնֆերանս՝ միտված զինել Վայոց ձորի մարզի ու հարակից տարածաշրջանների պատանիներին ու երիտասարդներին թվային մարքեթինգի, բիզնես և տեղեկատվական տեխնոլոգիաների արդի մասնագիտությունների և մասնագիտացումների մասին գիտելիքներով ու գործիքակազմով

5. **30.04.2022թ.** - Մասնակցություն համապետական շաբաթօրյակին՝ Եղեգնաձորի մշակույթի կենտրոնի շենքի ներքին և արտաքին մաքրման աշխատանքներ

6. **04.05.2022թ.** - «Ֆրանսիայի օրերը Վայոց ձորում» խորագրով համերգ՝ նվիրված հայ-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին՝ Վայոց ձորի մարզի տաղանդավոր երիտասարդների մասնակցությամբ

7. **07.05.2022թ.** - «Իմ երգը՝ Ձեզ» խորագրով համերգ՝ նվիրված Սոնա Մարգարյանի ծննդյան 65-ամյակին: Հոբելյարը իր կյանքի անցած ուղու և ձեռքբերումների պատմությունը համեմեց իր գեղեցիկ երաժշտական կատարումներով՝ ժողովրդական գործիքների նվագակցությամբ:

8. **10.06.2022թ.** - «Я краснею» արկածային մուլտֆիլմի ցուցադրություն՝ երիտասարդ մշակութային կամավորների հետ համագործակցությամբ

9. **14.06.2022թ.**- Եղեգնաձորի երաժշտական դպրոցի սաների 2021-2022 ուս. տարվա տարեվերջյան հաշվետու համերգ՝ այդ տարում միջմարզային, հանրապետական և միջազգային տարբեր մրցույթ-փառատոններին մասնակցած և մրցանակների արժանացած սաների մասնակցությամբ

10. **27.06.2022թ.**- «Նազանի Projekt» խորագրով համերգ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երիտասարդ, տաղանդավոր երաժիշտների կատարումներով՝ կենդանի հնչողությամբ և ժողովրդական գործիքների նվագակցությամբ

11. **12.08.2022թ.**- Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառում՝ Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում գործող «Մեղեդի» ստուդիայի սաների և նույն ստուդիայի ղեկավար, տաղանդաշատ երաժիշտ Անդրանիկ Հարությունյանի մասնակցությամբ

12. **22.08.2022թ.**- «Ռեստարտ» գիտակրթական-բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված RestArt Youth Fest երիտասարդական փառատոն՝ Վայոց ձորի մարզը ներկայացնող հասարակական կազմակերպությունների, անհատ ձեռներեցների արտադրանքների ցուցահանդես-վաճառք՝ Վայոց ձորի մարզի երիտասարդներին ակտիվացնելու, համայնքի կյանքին ներգրավվելու մոտիվացիա ստեղծելու նպատակով:

13. **26.09.2022թ.**- Եվրոպական ժառանգության օրերի «Կայուն ժառանգություն» խորագրով ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում գործող Բատիկայի խմբակի սաների՝ **բատիկ տեխնոլոգիայով կատարված աշխատանքների ցուցադրություն/** Խմբակի ղեկավար՝ Նելլի Հովհաննիսյան/

14. **13.10.2022թ.**- Կրկեսային ուրախ ծրագիր՝ աճպարարների, ծաղրածուների, վարժեցրած կենդանիների, ակրոբատների, էկվիլիբրիստների մասնակցությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ

1. Հաստատությունում 2022թ. հունվարի դրությամբ գործել է **6 բաժին (դաշնամուրային, լարային, փողային, վոկալ, ազգային նվագարաններ, սինթեզատոր)**

2. 2022թ. սեպտեմբերի դրությամբ՝ 5 խումբ (դաշնամուրային, լարային, փողային, վոկալ, ազգային նվագարաններ)

2021-22 ուս. տարում ցուցաբերած արդյունքները և հաջողությունները՝

Եղեգնաձորի երաժշտական դպրոցի համար 2021-2022 ուս. տարին եղավ ձեռքբերումներով լի տարի: Դպրոցն ակտիվորեն մասնակցել է «Արտ–Սյուզիք», «Արտ Պիանո» միջազգային, «Փոքրիկ քայլ» և «Գլոբալ արտ ֆեստ» հանրապետական մրցույթ-փառատոններին, ինչպես նաև մի շարք օնլայն մրցույթներին՝ արժանանալով բարձր պարգևների և մրցանակային տեղերի:

Հունիս ամսին Եղեգնաձորի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ Եղեգնաձորի երաժշտական դպրոցի սաների տարեվերջյան հաշվետու համերգը:

Միջմարզային, հանրապետական և միջազգային մրցույթներին մասնակցած և մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտները Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանի անունից պարգևատրվեցին պատվոգրերով, իսկ նրանց պարապող դասատուները՝ շնորհակալագրերով:

Տարվա ընթացքում կազմակերպվել են նաև համերգներ՝ նվիրված բանակի օրվան, մայրության տոնին, Հայոց Մեծ եղեռնին, ինչպես նաև միացյալ համերգ «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում Երևանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական , Երևանի Էդվարդ Միրզոյանի անվան երաժշտական դպրոցների հետ համատեղ:

Իրականացվել են մեթոդական դասընթացներ տարբեր բաժիններում:

«Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ

Թանգարանում նախատեսվում է բացել քարեդարյան խոհանոց, որտեղ պետք է անցկացվի պարզունակ ուտեստների պատրաստման վարպետաց դասեր, այդ աշխատանքները իրականացվել են 80%-ով: Նախատեսվում է ավարտին հասցնել 2023թ. հունիս ամսին:

Իրականացվել է հայկական ավանդական թոնրի պատրաստման վարպետաց դաս, որի երկրորդ մասը, այն է՝ տեղադրումը և թրծումը, կիրականացվի 2023թ. գարնանը: 2022թ. ամռանը իրականացվել է Վայոց ձորի քարայրերի հնագիտական ուսումնասիրություն և քարտեզագրում, որի արդյունքում նախատեսվում է 2023թ. –ին իրականացնել 2 պեղումներ, մեկը Եղեգիսի կիրճում, մյուսը՝ Մոզրով գյուղի տարածքում:

«Գորգը և կարպետը, որպես կայուն ժառանգություն» ծրագրով կազմակերպվել է թանգարանում պահպանվող գորգերի և կարպետների բացօթյա ցուցադրություն:

«Ներկայացվում է Վայք քաղաքը» միջոցառման շրջանակներում ներկայացվել է Վայք քաղաքը սովետական ժամանակաշրջանում, այնտեղ գործող գործարանները և նրանց արտադրանքները, առանձին արտադրամասերի նյութերը:

«Մոմիկ ճարտարապետի ձեռակերտ խաչքարը, խաչքարը, որպես կայուն ժառանգություն» ծրագրի շրջանակներում անցկացվել է գրույց-քննարկում խաչքարի պատմամշակութային ամբողջական կերպարի, նրա ծագման, ժամանակագրության, հորինվածքի իմաստաբանության և խորհրդաբանության մասին: Միջոցառմանը ներկայացվել է Մոմիկի խաչքարը:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2022Թ.-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահություն

2022 թվականին մարզային առողջապահական հաստատություններին պետական բյուջեից փաստացի հատկացվել է 858,9 մլն. դրամ:

2022 թվականի ընթացքում իրականացվել է 114141.2 հազ. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածին եղել է 111462.8 հազ.դրամ՝ ավելացել է 2678.4 հազ. դրամով:

2022 թ. ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել են 241 ծնունդ, 2021թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել են 266 ծնունդ՝ նվազել է 25-ով:

2022թ.-ի ընթացքում ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 45 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 39 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 12/12 երեխա իրենց խնամակալների հետ:

Բժշկական կազմակերպություններում աշխատում է 395 բուժաշխատող:

Առողջապահության Ազգային Ինստիտուտի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվել են բազմաթիվ վեբինարներ, հեռուստակոնֆերանսներ տարբեր կարգի և նեղ մասնագետ բուժաշխատողների համար՝ ինչպես Covid-19-ի ախտորոշման, բուժման, վարման, կանխարգելման հետ կապված, այնպես էլ նեղ մասնագիտական թեմաներով: Կազմակերպվել է հանդիպում ՀՀ ԱՆ-ի տեղակալի, ԱԱԻ-ի տնօրենի հետ իրազեկելու հավաստագրմանը և հավաստագրման գործընթացի կազմակերպմանը ներկայացվող պահանջների մասին:

Մինչև 2023 թվականի հունվարի 1-ը ապահովել ենք մարզային ենթակայության բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների կրեդիտավորումները: 1 բուժաշխատող պետպատվերի շրջանակում մասնակցել է վերապատրաստման դասընթացների:

Կաթիլ ՀԿ-ի հետ համատեղ 150 բուժքույրերի կրեդիտավորված դասընթացի կազմակերպում:

Ջերմուկի ԱԿ-ին և Վայքի ԲՄ-ին հատկացվել են մեկական ՇՕ մեքենա:

Վայքի ԲՄ ՓԲԸ-ում Միջազգային Կարմիր Խաչի հովանավորությամբ բացվել է ընդունարանին կից անհետաձգելի օգնության կայան: Նախատեսվում է նմանատիպ բաժանմունքի բացում նաև Ջերմուկի ԱԿ ՓԲԸ-ում և Խաչիկի ԲՄԿ-ում:

Մարզի բժշկական կազմակերպություններին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից, որպես մարդասիրական օգնություն, տրամադրվել է «Վեստֆրոստ ՎԼՍ 304Ա» մակնիշի պատվաստանյութերի պահպանման սառնարաններ և «Վեստֆրոստ ՄՖ 314» մակնիշի պատվաստանյութերի պահպանման սառցարաններ: Սառցարանները ընդունվել, պահեստավորվել և բաշխվել են բժշկական կազմակերպություններին:

Եղեգնաձորի ԲԿ-ում գործող “Հայկական ակնաբուժության նախագիծ” բարեգործական հիմնադրամի (ՀԱՆ ԲՀ) հիմնած Վահագն Ազլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնում 2022թ. իրականացվել են 245 վիրահատություն:

Գյուղական համայնքներում բնակչությանն անհատույց օգտագործման համար բաշխվել է 200 հատ ակնոց:

Կորոնավիրուսի (Covid-19) դեմ պատվաստումների գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար բժշկական կազմակերպությունների հետ իրականացվել է առցանց և առկա խորհրդակցություններ: Կատարվել են այցեր բժշկական կազմակերպություններ, Ջերմուկ քաղաքի առողջարաններ:

30.12.2022-ի դրությամբ իրականացվել 35730 պատվաստում, որից 1-ին դեղաչափ՝ 49,3%, 2-րդ դեղաչափ՝ 45.4% և խթանիչ՝ 1.6%: Իրականացվում են գրիպի դեմ, ԱԿԴՄ-Մ, ՄՊՊ պատվաստումներ:

Կազմակերպվել է կենտրոնացված և մարդասիրական ճանապարհներով ստացվող դեղորայքի ստացում և կատարվել է բաշխումներ մարզի բուժհիմնարկներին, հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ ԱՆ:

Պարբերաբար կատարվել են այցեր հանրակրթական ուսումնական հաստատություններ հակահամաճարակային կանոնների պահպանման ուսումնասիրման նպատակով:

Աշխատել ենք ենթակա և վերադաս կազմակերպությունների, ՀՎԿԱԿ-ի մարզային մասնաճյուղի հետ :

Ուսումնասիրվել են քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, բարձրացված խնդիրներին տրվել են լուծումներ:

Սոցիալական ապահովության բնագավառ 2022 թվական

Ջինձառայողների սոցիալական ապահովություն. Աշխատանքներ են տարվել 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի և 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի ժամանակ զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ստացած զինձառայողների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ: Օրենքով սահմանված հատուցումները ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել է ՀՀ ՊՆ: Ընտանիքները հատուցումները ստացել են: Պարբերաբար կատարվել է տնային այցելություններ, տրամադրվել է խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ կարիքավոր ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինձառայողների ընտանիքների հաշվառումը: 2022 թվականի հաշվառվել է 4 զոհված զինձառայողների ընտանիքներ:

44 օրյա պատերազմի ժամանակ վիրավորված և հաշմանդամություն ձեռք բերած զինձառայողների առողջական խնդիրների լուծման համար աշխատանք է տարվել <<Գեյթվեյ Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության հետ և 11 զինձառայողներ բժշկական զննումից, անհրաժեշտ հետազոտություններից հետո ստացել են համապատասխան բուժում :

Համագործակցել են <<Ծնողագուրկ հայ երեխաների օգնության միություն>>(UOUF)- Հայաստան ԲՀ-ի հետ: Կարիքավոր զոհված և հաշմանդամություն ունեցող զինձառայողների ընտանիքներին ԲՀ-ի կողմից տրամադրվել է անհրաժեշտ օգնություն՝ աշխատանքային գործիքներ, ընտանի կենդանիներ՝ անասնապահությամբ զբաղվելու համար և այլն:

Տեղահանված ընտանիքների սոցիալական ապահովություն- Արցախի Հանրապետությունից տեղահանված և ՀՀ Վայոց ձորի մարզում հանգրվանած ընտանիքներին կարիքները պարբերաբար ուսումնասիրվել են և հասարակական, բարեգործական, միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքների արդյունքում նրանց անհրաժեշտ օգնություն է տրամադրվել: 2022 թվականին <<Հայկական բարեգործական ընդհանուր միության>> Հայաստանի ներկայացուցչության կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին տրամադրված հագուստի մարդասիրական օգնությունից տեղահանված ընտանիքներին տրամադրվել է տաք հագուստ:

Վայք համայնքում <<Դիակոնիա>> բարեգործական կազմակերպության կողմից տրամադրվել է սննդամթերքի փաթեթներ: <<Տեխնիկական համագործակցության և

զարգացման գործակալության»>> Հայաստանյան մասնաճյուղը /ACTED/ Արցախի Հանրապետությունից տեղահանված ՀՀ Վայոց ձորի մարզում բնակվող 83 ընտանիքի 401 անդամի տրամադրել է դրամական կտրոններ/վաուչերներ/:

Զբաղվածության խնդիրները լուծելու համար Արենի համայնքում կազմակերպվել է <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման»> 2 ծրագիր:

Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքների խնդիրները լուծելու համար համագործակցություն է հաստատվել Արցախի Հանրապետության կառավարության օպերատիվ շտաբի հետ: Տեղահանված ընտանիքների շրջանում իրազեկման աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության աջակցության ծրագրերի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն է տրամադրվել:

Սեպտեմբերի 13-ին Ադրբեջանական ագրեսիայի արդյունքում Ջերմուկ համայնքից տեղահանված ընտանիքների 80%-ը հանգրվանեցին ՀՀ Վայոց ձորի մարզի տարբեր բնակավայրերում: Կատարվել է տեղահանված բնակչության հաշվառման աշխատանքներ՝ լրացվում էր ընտանիքի կազմը, սեռատարիքային կառուցվածքը, ժամանակավոր և նախկին բնակության վայրի հասցեները, կոնտակտային տվյալները, ինչպես նաև նշված ընտանիքների կարիքների ամբողջական գնահատականը /սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք և այլ կարիքներ/: Հաշվառման թերթիկների տվյալները մուտքագրվել են ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության <<Տեղահանված անձանց հաշվառման համակարգում>>:

Ժամանակավորապես տեղահանված քաղաքացիներին հրատապ աջակցություն տրամադրելու համար ՀՀ ԱՍՀՆ կողմից գործարկվեց <<Առաջնային կարիքի հաշվառման հարթակը>>:

Ուսումնասիրված և ընդհանրացված կարիքների հիման վրա Հայկական կարմիր Խաչի ընկերության միջոցով անհրաժեշտ ապրանքները ներկրվել են մարզ և տրամադրվել շահառուներին: Տրամադրված օգնության վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվել է <<Առաջնային կարիքի հաշվառման հարթակում>>: Մարզի բոլոր 5 համայնքներում անհրաժեշտ օգնությունները տրամադրվել են և որևէ կարիքավոր ընտանիք ցուցակներից դուրս չի մնացել:

Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցներ. Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը պետական դրամաշնորհով ՀՀ Վայոց ձորի մարզում տնային պայմաններում խնամքի ծառայություններ է մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ անհատական սոցիալական կարիքներին համապատասխան: Տնային պայմաններում խնամք է ստանում 85 շահառու:

Շահառուներին տրամադրվել է սոցիալ-հոգեբանական, բժշկական օգնության, կենցաղային սպասարկման կազմակերպման և խնամքի իրականացման, իրավունքների պաշտպանությանն ուղղված ծառայություններ:

Տարեցները գտնվում են մարզային և համայնքային իշխանությունների ուշադրության

կենտրոնում: 2022 թվականի հոկտեմբերի 1-ին՝ տարեցների միջազգային օրվա կապակցությամբ, մարզի հարյուրամյա տարեցներին շնորհավորել և նվերներ են հանձնել ՀՀ Վայոց ձորի մարզպետը և համայնքների ղեկավարները: Տարեցների համար նախընտրելի համայնքահեն ծառայությունների ներդրման նպատակով մարզի 5 համայնքներում իրականացվել է կարիքների, հնարավորությունների, ռեսուրսների ուսումնասիրություն և գնահատում:

Հաշմանդամություն ունեցող անձանց ներառման աշխատանքները համակարգում է <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Վայոց ձորի մարզային հանձնաժողովը>>: Հանձնաժողովը համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական, մարզային, համայնքային մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ: Ընդլայնված նիստերին մասնակցել են «Ներառական իրավական բարեփոխումների» կոալիցիայի համակարգող անդամները, համայնքների սոցիալական աշխատողները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Մարզի բնակչության սոցիալական վիճակը պարբերաբար ուսումնասիրվում է, կատարվում են տնային այցելություններ, սոցիալական լարվածությունը մեղմելու համար կարիքավոր ընտանիքներին օգնություն է տրամադրվում: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից 645 սոցիալապես անապահով քաղաքացիների դրամական օգնություն է տրամադրվել: Եղեգնաձոր համայնքի 75 բազմազավակ սոցիալապես անապահով ընտանիքների ԱՄԷմիությունների դեսպանատան կողմից տրամադրվել է սննդամթերքի փաթեթներ: ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին տրամադրված հազուստի մարդասիրական օգնությունից մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է տաք հազուստ:

2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման համակարգի մարմինների հետ:

Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել մարզի համայնքների 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանների հաստատման ուղղությամբ: Մարզի 5 համայնքներում սահմանված ժամկետներում հաստատվել են 2022 թվականի Տարեկան աշխատանքային պլանները(ՏԱՊ), որոնք բխում են համայնքների զարգացման ծրագրերի 2022 թվականի համար նախատեսված միջոցառումներից:

Տարվել են աշխատանքներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի

Հանրապետության օրենքի պահանջների կատարման նպատակով ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Համակարգվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Համակարգվել է համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով համայնքների պաշտոնական կայքերում և ֆեյսբուքյան էջերում պարբերաբար տեղակայվել են տեղեկություններ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ:

Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ամսական, եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններ:

Մասնավորապես՝

1. Ամսական հաշվետվությունների մասով.

1.1. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 10.02.2017 թվականի թիվ 01/15/685-17 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կուտակված աղբի մաքրման աշխատանքների վերաբերյալ,

1.2. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 04.03.2022 թվականի թիվ ԳՍ/15.4/5385 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի համայնքներում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների վերաբերյալ,

1.3. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարի 12.04.2022 թվականի թիվ ԳՄ//9017-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմերի գործունեության կազմակերպման ընթացքում լիազոր մարմնի կողմից տրամադրված ուղեցույցի դրույթների կիրառման նկատմամբ սահմանված հսկողության արդյունքների վերաբերյալ,

1.4. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.02.2022 թվականի թիվ ԳՄ/20.1/139-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների ղեկավարների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:

2. Եռամսյակային հաշվետվությունների մասով.

2.1. Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 24.05.2010 թվականի թիվ 01/16/3030-10 հանձնարարականի և ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.6 կետի 3-րդ ենթակետի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն համայնքների ղեկավարների և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ,

2.2. Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.08.2010 թվականի թիվ 01/16/4439-09 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի համայնքների բյուջեների,

բյուջեների եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, բյուջեներում կատարվող փոփոխությունների, համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման վերաբերյալ,

2.3. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.04.2022 թվականի թիվ ԳՄ//8856-2022 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում էլեկտրոնային եղանակով իրականացվող գործառնությունների և տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

2.4. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.04.2022 թվականի թիվ ԳՄ//8856-2022 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի խոշորացված համայնքների վերաբերյալ:

2.5. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.01.2022 թվականի թիվ ԳՄ//900-2022 հանձնարարականի պահանջների ՀՀ

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների համացանցային կայքերի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

2.6. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 12.04.2022 թվականի թիվ ԳՄ//9017-2022 հանձնարարականի պահանջների պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի միավորված համայնքներում ստացված տեխնիկայի և կատարված աշխատանքների վերաբերյալ:

3. Կիսամյակային հաշվետվությունների մասով.

3.1. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի պահանջների ՀՀ Վայոց ձորի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.11.2021 թվականի թիվ 67-Լ, հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 02.05.2022 թվականի թիվ 116-Ս, 26.05.2022 թվականի թիվ 127-Ս որոշումների պահանջների՝ 2022 թվականի մայիսի 16-ից 27-ը, մայիսի 30-ից հունիսի 10-ը, իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի և Եղեգիս համայնքներում:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Համայնքային ծառայության մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<Քաղաքաշինության մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքների, ՀՀ Հողային օրենսգրքի, ՀՀ կառավարության մի շարք որոշումների և ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինների ղեկավարների կողմից ընդունված մի շարք հրամանների պահանջների կատարման ուղղությամբ:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ՝ քննարկվել և սահմանվել են թերությունների վերացման ժամկետները:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

2022 թվականի ընթացքում համակարգվել է համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների հայտարարման գործընթացը:

Մարզի համայնքներում 2022 թվականի ընթացքում համայնքային ծառայության 114 թափուր պաշտոնների համար հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում համալրվել է 90 պաշտոն:

Հաշվետու ժամանակահատվածում ատեստավորվել են 17 համայնքային ծառայողներ. ատեստավորման արդյունքում համայնքային ծառայողները ատեստավորման հանձնաժողովների կողմից կայացված որոշումների արդյունքում համապատասխանել են իրենց պաշտոններին:

2022 թվականին համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են համայնքապետարանների աշխատակազմերի 39 համայնքային ծառայողներ:

ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետարանների աշխատակազմերում 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնների թիվը 147 է:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ: Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները:

Համագործակցելով մարզի համայնքապետարանների աշխատակազմերի հետ՝ գույքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները: Համայնքների և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրվել են դրանց լուծման նախնական հնարավոր գնահատականները: Գույքագրված և գնահատված հիմնախնդիրները մարզպետարանում քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում պատշաճ աշխատանքներ են իրականացվել 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի՝ մարզպետին և համայնքների ղեկավարներին վերաբերող կետերի պահանջների կատարման ուղղությամբ:

2022 թվականի ընթացքում աշխատանքային պլաններին համաձայն և ըստ անհրաժեշտության առողջ համագործակցություն է ապահովվել պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ:

Համագործակցելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային վարչության հետ՝ նախապատրաստվել և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի համաձայնեցմանն է ներկայացվել

<<ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշման նախագիծը:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ ըստ առնչության, համագործակցված աշխատանքներ են իրականացվել ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության

հետ. մասնավորապես՝ ձեռնարկվել են պատշաճ միջոցներ 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ուղղությամբ:

Վարչության գործառույթներից բխող աշխատանքները պատշաճ որակով և ժամանակին կատարելու նպատակով վարչությունը Mulberry համակարգով իրականացրել է աշխատանքներ թվով 3598 հանձնարարկանների և գրությունների պահանջների կատարման ուղղությամբ: Միաժամանակ իրականացվել են Mulberry համակարգով չհաշվեգրված տեղեկությունների հավաքագրման, մշակման և վերլուծության աշխատանքներ:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԳՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանը՝ 01.01.2022թ. – 30.12.2022թ.

Հաշվետու ժամանակաշրջանում ստորաբաժանումը իր գործունեությունը իրականացրել է տարեկան աշխատանքային ծրագրով ամրագրված գործառույթների և կանոնադրության շրջանակներում:

1. Մարզպետարանի էլեկտրոնային համակարգում օգտագործվող ծրագրային խնդիրների ապահովման և նրանց օգտագործման աշխատանքների կազմակերպման աջակցություն: Համակարգչային ցանցի, օպերացիոն համակարգերի, հարակից օգնող ծրագրերի, հակավիրուսային խնդիրների և հատուկ ծրագրային ապահովման խնդիրների լուծում և համակարգում:

Այս գործառույթի շրջանակներում հիմնական գործունեությունը կազմակերպել և իրականացրել է քարտուղարության վարչատնտեսական բաժնի ցանցային ադմինիստրատորը: Տարվա կտրվածքով ծրագրային ապահովման և օգտագործման, համակարգչային ցանցի, օպերացիոն համակարգերի, հարակից օգնող, հակավիրուսային և հատուկ ծրագրային ապահովման խնդիրներ չեն առաջացել: Ներդրված բոլոր ծրագրերը գործել են անխափան, ժամանակին վերացվել են առաջացած թերությունները, նորոգվել են սարքավորումները: Ապահովվել է առցանց բոլոր վեբինարների և քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացները: Կահավորվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթների անցկացման աշխատասենյակը՝ համաձայն համապատասխան կարգի պահանջների: Կազմակերպվել են քաղծառայության թափուր պաշտոնների մրցույթների անցկացման նախապատրաստական աշխատանքները:

2. Գնման գործընթացի իրականացում և համապատասխան ընթացակարգերի ապահովում:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի 2022թ-ի գնումների պլանի համապատասխան կազմվել է տեխնիկական բնութագիր ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար: Կնքվել են պայմանագրեր մատակարար կազմակերպությունների հետ, ձեռք են բերվել ապրանքներ և ծառայություններ, կազմվել են

համապատասխան արձանագրություններ: Կատարվել է մարզպետարանի ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Մարզպետարանի գնման պլանով նախատեսված գնման գործընթացները իրականացվել են համապատասխան ընթացակարգերով և խնդիրներ չեն արձանագրվել: Անխափան ռեժիմով վարչատնտեսական բաժինը ապահովել է աշխատակիցներին աշխատանքի համար անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով:

3. ՀՀ Վայոց ձորի մարզի խորհրդի գործունեության հետ կապված կազմակերպական աշխատանքների իրականացում, նիստերի և խորհրդակցությունների կազմակերպում և արձանագրում:

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է մարզի խորհրդի չորս նիստ, կազմակերպվել է երեսուներեք արարողակարգային և այլ միջոցառումների նախապատրաստական աշխատանքներ: Մարզի խորհրդի նիստերը արձանագրվել են և ՀՀ կառավարության «Մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգ սահմանելու մասին» 30/04/2020թ. N 647-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի համաձայն արձանագրությունները տրամադրվել են ՀՀ ՏԿԵ նախարարություն:

4. Մարզպետի և գլխավոր քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերով, աշխատանքային և գործակարգավորական խորհրդակցություններում տրված հանձնարարականների կատարման վերահսկողության ապահովում:

Ստորաբաժանման կողմից իրականացվել է մարզպետի և գլխավոր քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերով, աշխատանքային և գործակարգավորական խորհրդակցություններում տրված բոլոր հանձնարարականների կատարման վերահսկողություն և ապահովվել է դրանց կատարումը ժամկետին և պատշաճ որակով:

5. Էլեկտրոնային և թղթային փաստաթղթաշրջանառության կազմակերպում և իրականացում:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում իրականացվել է ընդամենը 29326 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 10152 մտից, 8468 էլից, 11326 ներքին: 2022 թվականի աշխատանքային տարվա ընթացքում մարզպետի կողմից ընդունվել են 252 որոշումներ, գլխավոր քարտուղարի կողմից արձակվել են 438 հրամաններ:

Մալբրի համակարգում չներառված մյուս բոլոր գործառույթներն, այդ թվում թղթային փաստաթղթաշրջանառությունն, իրականացվել են առանց թերացումների և ուշացումներ չեն արձանագրվել:

6. ՀՀ Կառավարության, ՀՀ Վարչապետի և Հանրապետական գործադիր մարմինների հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում:

ՀՀ Կառավարության, ՀՀ Վարչապետի և Հանրապետական գործադիր մարմինների հանձնարարականների կատարման նկատմամբ ստորաբաժանման կողմից սահմանվել և իրականացվել է առաձևակի վերահսկողություն: Վերահսկվել է մարզպետարանի մյուս բոլոր ստորաբաժանումների կողմից այդ հանձնարարականների ժամանակին և հավուր պատշաճի կատարումը, ուշացումներ և թերացումներ չեն արձանագրվել: Ստորաբաժանման կողմից ՀՀ Վարչապետի աշխատակազմ և ՀՀ ՏԿԵ նախարարություն ներկայացվող բոլոր ամսական և կիսամյակային հաշվետվությունները տրվել են ժամանակին:

7. Շենքի, շինությունների, ապրանքանյութական արժեքների պահպանություն, լուսավորության, ջրամատակարարման, հեռախոսակապի, սանհանգույցների հետ կապված աշխատանքներ:

Սահմանված կարգով իրականացվել են մարզպետարանի շենքի, շինությունների, ապրանքանյութական արժեքների պահպանություն, լուսավորության, ջրամատակարարման, հեռախոսակապի, սանհանգույցների հետ կապված աշխատանքները: Հիմնանորոգվել է 1-ին հարկի զուգարանը:

Մշտապես իրականացվել է մարզպետարանի ծառայողական մեքենաների շահագործման, սպասարկման և պահպանման աշխատանքները:

8. Իրավական ակտերի նախագծերի նախապատրաստում:

Մարզպետի կողմից ընդունված որոշումների հաշվառումը իրականացվել է ընդհանուր բաժնում, որի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ Վարչապետի աշխատակազմ և ՀՀ ՏԿԵ նախարարություն:

9. Քաղաքացիների դիմում-բողոքների քննարկում և քաղաքացիների ընդունելության կազմակերպում:

Ստորաբաժանման կողմից ամենօրյա ռեժիմով կազմակերպվել է մարզպետարան դիմած քաղաքացիների ընդունելություն և սպասարկում, ցուցաբերվել է համապատասխան ուղղորդում կամ օժանդակություն:

2022թ-ի ընթացքում ստացվել է 1190 դիմում, որից՝

1. Դրամական օգնություն է խնդրել 762 քաղաքացի: 643 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 119-ինը՝ մերժվել է:

2. Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 24 քաղաքացի, որից 23 դիմումներին պատասխանվել է: 1-ը մերժվել է:

3. Առողջապահական բնույթի 5 դիմում է ստացվել, ստացված 4 դիմումները բավարարվել են: 1-ը մերժվել է:

4. Աշխատանքի հարցերով դիմել է 40 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

5. Գյուղատնտեսական հարցերով դիմել է 31 քաղաքացի, 31-ին տրվել է դրական պատասխան:

6. Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 20 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

7. Հողաշինության հարցերով դիմած քաղաքացիներից 18-ին էլ տրվել է դրական պատասխան:

8. Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 67 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

9. Ստացվել է այլ բնույթի 223 դիմում:

10. Այլ ընթացիկ աշխատանքներ:

Պատասխանվել են քաղաքացիների բանավոր հարցումներին, հեռախոսազանգերին, տրվել են համապատասխան ուղղորդումներ: Մարզպետարանի աշխատակիցներին ցուցաբերվել է մալբրի համակարգի հետ կապված անհրաժեշտ օժանդակություն:

2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ

ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

❖ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժինը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված՝ Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

❖ Բաժնի կողմից ուսումնասիրվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին:

❖ Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 686 որոշում, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքների բյուջեների հաստատմանը, դրանց կատարման եռամսյակային հաղորդումներին, կատարված փոփոխություններին և հողվածային վերաբաշխումներին, համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և դրույքաչափերի հաստատմանը, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարմանը և օգտագործման տրամադրմանը, հողամասերի նպատակային նշանակության փոփոխությանը, համայնքի կամավոր խնդիրների լուծմանը և ներհամայնքային այլ խնդիրների: Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների ղեկավարների կողմից ընդունվել է 1863 որոշում, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման կամ օգտագործման տրամադրմանը՝ հիմք ընդունելով համայնքի ավագանու համապատասխան որոշումները, հողերի կամ շինությունների գործառնական նշանակության փոփոխությանը, անշարժ գույն առանձին միավոր ճանաչելուն և դրանց հասցեավորմանը, համապատասխան կարգերի հաստատմանը, հանձնաժողովների ստեղծմանը և այլ հարցերի:

Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են ուղղումների, դրանք սահմանված կարգով և ժամկետներում ուղղվել և վերադարձվել են մարզպետարան:

❖ Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և ներկայացվել են խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ, տրվել է իրավաբանական խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է մարզի տարբեր համայնքների բնակիչների 44 դիմումի, որոնցում բարձրացված հարցերը հիմանկանում վերաբերվել են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետ կապված, աշխատանքային փոխհարաբերությունների ընթացքում առաջացած վեճերի, հողային սահմանների ճշգրտման, սեփականության իրավունքի, գույքին պատճառված վնասի, ապահովագրության վերաբերյալ և բազմաբնույթ այլ խնդիրների: Դիմումներին պատասխանվել է ՀՀ օրենսդրության պահանջներից ելնելով, մի մասին տրվել է հարցերը լուծող սպառիչ պատասխան, իսկ մարզպետարանի իրավասության շրջանակից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ դիմումատուներին բացատրվել է գործող կարգը և ուղղորդվել են համապատասխան ոլորտներ:

❖ Իրականացվել է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելություն, տրամադրվել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և համապատասխան տեղեկատվություն՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների՝ ղեկավարների, աշխատակիցների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների: Համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին ամենօրյա աշխատանքային կարգով տրամադրվել է խորհրդատվություն, մեթոդական ցուցումներ, իրականացվել է փոխհամագործակցություն:

❖ Ուսումնասիրվել են Բաժնին մակագրված նամակները, գրությունները, հանձնարարականները և օրենքով սահմանված ժամկետում ապահովվել է դրանց լուծումը: Հաշվետու ժամանակահատվածում Բաժինը ստացել է 756 մտից, 3808 ներքին գրություն, պատասխանվել է 1095 գրության և պատրաստվել է 428 ելից գրություն: Հանձնարարականներին պատասխանելու համար սահմանված ժամկետների խախտումներ չեն գրանցվել:

❖ Պատրաստվել են Բաժնի գործունեությանն առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին:

❖ Ուսումնասիրվել են մակագրված իրավական ակտերի նախագծերը, որոշ դեպքերում ներկայացվել են առաջարկություններ՝ դրանցում ներառելու համար:

❖ Ամենամայա հաշվետվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

❖ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

❖ Պատասխանվել են տարբեր պետական մարմինների, փաստաբանների, լրագրողների և այլ կազմակերպությունների կողմից ուղարկված գրություններին, հարցումներին:

Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի 2022 թվականին իրականացրած գործունեության վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրի մշտադիտարկման, մարզի փոքր և միջին ձեռնարկությունների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքներ:

Կատարվել են մարզի փոքր և միջին ձեռնարկատիրության ծրագրերի առաջնահերթությունների և գերակայությունների որոշման, զարգացման ծրագրերի քննարկման աշխատանքներ: Ապահովվել է փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտով զբաղվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը:

Կազմակերպվել են մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, ծրագրերի նախագծերի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի, զեկուցման նյութերի հավաքագրման, պատրաստման աշխատանքներ:

Կազմակերպել և իրականացրել է տնտեսական վիճակի վերլուծություն, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծության աշխատանքներ:

Իրականացրել է տարեկան և կիսամյակային հաշվետվությունների կազմում և վերլուծություն:

Մշակվել և ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունից բխող ՀՀ մարզերի 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրերի մոնիթորինգային հաշվետվություն՝ նախատեսված, սակայն չիրականացված աշխատանքների, ինչպես նաև ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության մոնիթորինգի հիմնական ցուցանիշների և 2022 թվականին իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ:

Ուսումնասիրել և համապատասխան ընթացք է տվել տարբեր համայնքների քաղաքացիների դիմումներին:

Մասնակցել է 2022 թվականին մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից համայնքներ կատարած այցի ընթացքում ազգաբնակչության կողմից բարձրացված խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աշխատանքներ:

Հավաքագրել և ՀՀ ՏԿԵՆ է ներկայացրել համայնքներում գործող արտադրական կազմակերպությունների, պահեստների և բազաների, ինչպես նաև առևտրով զբաղվող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Մասնակցել է «Արձակուրդը Հայաստանում» թողարկման նկարահանումների նախապատրաստական աշխատանքներին:

Բաժինը համայնքային հուշարձանապահպանության ծրագրի շրջանակներում մասնակցել է «Պատմամշակութային ժառանգության պահպանություն և հանրահռչակում. փորձ և նոր մոտեցումներ» թեմայով աշխատաժողովի կազմակերպման աշխատանքներին:

Բաժինը մարտի 21-25-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել է ՉԺՀ Շանդունի արտաքին առևտրի մասնագիտական քոլեջի կողմից կազմակերպված «Աղքատության վերացում և գլոբալ կայուն զարգացում» թեմայով վերապատրաստմանը:

Ապրիլի 25-ին մասնակցել է «ԵՄ-ն հանուն Հայաստանի կայուն էներգետիկայի» ծրագրի կողմից կազմակերպված «Համայնքային կայուն էներգետիկայի» ֆորումին:

Մասնակցել է ՀՀ Սյունիքի մարզում մայիսի 11-13-ը կայացած «ԵՍՄ-ում միջտարածաշրջանային առևտրատնտեսական համագործակցության զարգացում» թեմայով սեմինար-հանդիպմանը:

Հունիսի 2-3-ին մասնակցել է ՄԱԿ ՁՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի շրջանակներում կազմակերպված «Զբոսաշրջությունը և գյուղական համայնքների զարգացումը, ինչպես են տեղական փորձառնությունները նպաստում զբոսաշրջային ուղղության խթանմանն ու արժևորմանը» խորագրով միջազգային համաժողովին:

Իրականացրել է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) կողմից կազմակերպվող «Գյուղական համայնքների զարգացում» թեմայով երրորդ ամենամյա համաժողովի նախապատրաստական աշխատանքներ:

Հոկտեմբերի 20-ին մասնակցել է «Արփա» բնապահպանական հիմնադրամի և A.R.S. Progetti իտալական ընկերության կողմից կազմակերպված հանդիպում-քննարկմանը, որտեղ

քննարկվել են համատեղ ասոցիացիայի ստեղծման գաղափարը:

Մասնակցել է հոկտեմբերի 5-ից 6-ը Երևանում կայացած «Գլոբալ ինովացիոն ֆորում» ի նախապատրաստական աշխատանքներին:

Աշխատանքներ է կատարել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից կազմակերպվող պոլիէթիլենային տոպրակների օգտագործման դեմ պայքարի ուղղությամբ կատարված աշխատանքներին:

Մասնակցել է «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ինտեգրումը մարզային և համայնքային զարգացման ռազմավարություններում» դասընթացին(6 ժամ տևողությամբ):

Մասնակցել է «Բաց կառավարումը» Հայաստանում. գործադիր և տեղային գործընթացներում եռօրյա դասընթացին:

Մասնակցել է նոյեմբերի 7-ին Գորիսում կայացած «ՀՀ հարավային և կենտրոնական համայնքների տնտեսական զարգացման» համաժողովի նախապատրաստական աշխատանքներին:

Մասնակցել է ՌԴ «Մենեջմենթ և ֆինանսներ» ՍՊԸ-ի գրությամբ առաջարկված տեսակոնֆերանսին:

Ձրոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով ապահովվովել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ ու արդյունավետ համագործակցությունը:

Մարզում զրոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր:

Ձրոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը: Ինչպես նաև պարբերաբար մշակվել են հյուրատների զարգացման ծրագրեր:

Ուսումնասիրել, հավաքագրել է Վայոց ձորի մարզի զրոսաշրջային ռեսուրսների և ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն՝ մարզում զրոսաշրջության զարգացման հիմնական տեսակները, մարզ այցելած զրոսաշրջիկների վիճակագրությունը, զրոսաշրջային ենթակառուցվածքները, մարզի զրոսաշրջային ռեսուրսները՝ բնական, նյութական մշակութային ժառանգություն, ոչ նյութական մշակութային ժառանգություն, սնունդ եւ խմիչք,

վերականգնողական, ձմեռային, արկածային, փառատոներ եւ միջոցառումներ: Վերլուծել և ներկայացրել է մարզի գիշերակացի և սննդի օբյեկտների ընդհանուր քանակը, ամենաայցելվող վայրերը և այլ:

Ընթացիկ աշխատանքներ են կատարվել՝ Երևան–Մեղրի ճանապարհից հեռու գտնվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձանների ենթակառուցվածքները զարգացնելու, ինչպես նաև նրանց մասին համարժեք տեղեկատվության տարածումն ապահովելու ուղղությամբ, նպաստելով նաև էկոտուրիզմի, բնական տուրիզմի, արկածային տուրիզմի, գաստրոտուրիզմի, գիտական տուրիզմի, անձավագիտական տուրերի, լեռնային և հետիոտն երթերի, կանիոնինգի (ժայռամագլցման), ձկնորսության, պատմամշակութային տուրիզմի զարգացմանը:

Աշխատանքներ են կատարվել մարզի պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի, բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, էկոլոգիայի մաքուր մթերքների արտադրության, առողջարանների և հանգստյան գոտիների ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրանց կարողությունները պատշաճ ներկայացնելու ուղղությամբ՝ դրանով իսկ մարզը դարձնելով զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա 4 եղանակների համար:

Արտաքին կապերի զարգացման, մարզի տնտեսվարող սուբյեկտներին աջակցության ցուցաբերման նպատակով, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծման ուղղությամբ տնտեսվարող սուբյեկտների համար իրականացվել համագործակցության ընդլայնման լայնածավալ աշխատանքներ:

Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը Իրանի Իսլամական Հանրապետության Խոյ քաղաքի կուսակալության, ՌԴ Նիժնի-Նովգորոդի և Արխանգելսկի մարզի, Բելոռուսիայի Հանրապետություն:

Աշխատանքներ են կատարվել հայ-լեհական, հայ-բելառուսական, հայ-չինական, հայ-բուլղարական, հայ-ուկրաինական, հայ-լատվիական տնտեսական համագործակցության արձանագրությունների կետերի կատարման ուղղությամբ, որոնց շրջանակներում մասնակցություն է ապահովվել միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված առցանց սեմինարների, հանդիպումների, քննարկումների և դասընթացների:

Շարունակվել են աշխատանքները ՀՀ-Սերբիա երկկողմ հարաբերությունների շրջանակներում ապակենտրոնացված համագործակցության հետագա խթանման շրջանակներում Սոկոբանյա-Ջերմուկ քաղաքների միջև գործընկերային հարաբերությունների հաստատման վերաբերյալ ներկայացված առաջարկությունների շրջանակներում:

Բաժինը մասնակցել է հունիսի 9-ին Ջերմուկի «Գրանդ Ռեզորթ» հյուրանոցում Արիանգելսկի պատվիրակության համար կազմակերպված ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներին:

Թարմացվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացրվել ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև ունեցած միջտարածաշրջանային համագործակցությունների շտեմարանի վերաբերյալ տեղեկատվությունը:

2022թ. սեպտեմբերի 19-ին մայրաքաղաք Երևանում կայացած հայ-ռուսական միջտարածաշրջանային իններորդ համաժողովի շրջանակներում մշակվել է մարզի վերաբերյալ տեղեկատվություն և ֆորումի «Տուրիստական պոտենցիալի զարգացում» խորագրով կլոր սեղանին ներկայացվել է մարզի տուրիստական պոտենցիալը:

Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովի վերաբերյալ գրության համաձայն՝ հավաքագրել և ներկայացրել է տեղեկատվություն՝ հունիսի 29-30-ը Լիոնում կայացած հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների ընթացքի վերաբերյալ:

Հայ-չինական համագործակցության հուշագիրը քննարկվել է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ և ներկայացրել առաջարկներ:

Մասնակցել է դեկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Անհոյ նահանգի միջև ստորագրվելիք Մտադրությունների մասին նամակի շրջանակներում Եղեգնաձոր և Հեյֆեյ քաղաքների միջև միջմարզային բարեկամական հարաբերություններ հաստատելու համատեքստում հավաքագրվող տեղեկատվության մշակման, համակարգման աշխատանքներին:

Մշակել և ներկայացրել է ՉԺՀ Անհոյ նահանգի կողմից առաջարկված երկու մարզերի միջև հետագա համագործակցության հուշագրի շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ նկատառումներ:

Մասնակցել է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի և Իտալիայի Հանրապետության Ապուլիայի մարզի Բիշելիե քաղաքի միջև համագործակցության համաձայնագրի մշակման աշխատանքներին:

Աշխատանքներ են կատարվել «Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման գործում Սփյուռքի բարերարներին ներգրավելու վերաբերյալ» ծրագրի շրջանակներում:

2021թ. սուրվենցիոն ծրագրեր

2021թ. մարզի համայնքներից մարզպետարան է ներկայացվել թվով **46 սուրվենցիոն հայտ**: ՀՀ ՏԿԵՆ հաստատման են ներկայացվել **39 սուրվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ: Սուրվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 39 ծրագրից հաստատվել է **38 ծրագիր` 2 մլրդ. 126,3 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, որից **978,6 մլն. ՀՀ դրամը կամ 46,02 %-ը համայնքների ներդրումն է, 1 մլրդ. 141,4 մլն. ՀՀ դրամը կամ 53,68 %-ը` սուրվենցիայի գումարն է, իսկ 6,3 մլն. ՀՀ դրամը կամ 0,3 %-ը` մասնավորի ներդրումն է:**

38 սուրվենցիոն ծրագրերից իրականացվել են **32-ը` 1,625,458,766 ՀՀ դրամ արժողությամբ**, որից համայնք` **722,442,549.5 ՀՀ դրամ (44,5%)**, սուրվենցիա` **903,004,216.5 ՀՀ դրամ (55,5%)**:

6 ծրագրերի իրականացման համար տարբեր պատճառներով մրցույթներ չեն հայտարարվել:

2021թ. ավարտվել և ֆինանսավորվել են **16 ծրագիր**: 2022թ. տեղափոխված ծրագրերից ավարտվել և ֆինանսավորվել են **ևս 15 ծրագիր**: Ընդհանուր առմամբ ավարտվել և ֆինանսավորվել են **31 ծրագիր` 1,385,172,865 ՀՀ դրամ արժողությամբ**, որից համայնք` **618,257,125 ՀՀ դրամ (44,6%)**, սուրվենցիա` **766,915,740 ՀՀ դրամ (55,4%)**: Իսկ **1 ծրագիր` «Գլաձոր համայնքի 11-րդ փողոց, թիվ 9 հասցեում գոյություն ունեցող մշակույթի տան վերահատակագծում և կցակառույցի իրականացում»:**

2022թ. սուրվենցիոն ծրագրեր

2022 թ. համար մարզի համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել **34 սուրվենցիոն հայտ** (Եղեգնաձոր` 9 ծրագիր, Ջերմուկ` 4 ծրագիր, Վայք` 8 ծրագիր, Արենի` 6

ծրագիր, Եղեգիս՝ 7 ծրագիր)՝ 3 մլրդ 174,9 մլն ՀՀ դրամ արժողությամբ, որից 1 մլրդ 343,7 մլն ՀՀ դրամը կամ 42,3 %-ը համայնքների ներդրումն է, 1 մլրդ 831,2 մլն ՀՀ դրամը կամ 57,7 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:

2021 թվականի սուբվենցիոն ծրագրերն իրականացվել

են մի շարք ոլորտներում, մասնավորապես՝

- խմելու ջրամատակարարում, ջրահեռացում,
- ոռոգման համակարգերի կառուցում-նորոգում,
- բնակավայրերի փողոցների կառուցում-նորոգում,
- փողոցային լուսավորության համակարգի կառուցում-նորոգում,
- վերականգնվող էներգետիկայի /այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում/,
- բնակավայրերի գազաֆիկացում,
- մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում,
- համայնքային ենթակայության շենք-շինությունների կառուցում/վերանորոգում,
- բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում:

Վերոնշյալ հայտերի շրջանակներում համայնքների կողմից ներկայացվել են **30 սուբվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ, որոնցից երեք փաթեթ լրամշակման ժամկետների սղության պատճառով ներկայացվելու են 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից պայմանով և առանց պայմանի հաստատվել է 27 ծրագիր՝ 3 մլրդ 825,7 մլն ՀՀ դրամ արժողությամբ, որից՝ 1 մլրդ 685,9 մլն ՀՀ դրամը կամ 44,1 %-ը համայնքների ներդրումն է, 2 մլրդ 139,7 մլն ՀՀ դրամը կամ 55,9 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:

27 սուբվենցիոն ծրագրերից՝

- 21 ծրագրերի շրջանակներում շին-աշխատանքներն ավարտվել են,

- 4 ծրագրեր չեն իրականացվում, տեղափոխվել են 2023թ:
- 2 ծրագրերի շրջանակներում աշխատանքներն սկսվել են և ընթացքի մեջ են:

2022 թվականին ֆինանսավորվել են 27 ծրագրերից **18 սուբվենցիոն ծրագրեր` 1 մլրդ 329,3 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, որից **550,8 մլն ՀՀ դրամը կամ 41,4 %-ը համայնքների ներդրումն է, 778,5 մլն ՀՀ դրամը կամ 58,6 %-ը` սուբվենցիայի գումարն է, ներկայացվել են պետական բյուջեից ֆինանսավորման:**

Կառավարության որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզին 2022 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար տրամադրվել է **771 015 900 ՀՀ դրամի սուբվենցիա:**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի 2022 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինն իր կանոնադրական գործառույթների շրջանակներում իրականացրել է հետևյալ աշխատանքները`

- ✓ Կատարել է այցելություններ 44-օրյա պատերազմում և 2022 թվականի սեպտեմբերին ռազմական գործողությունների ընթացքում զոհված, անհայտ կորած, վիրավորում ստացած և պայմանագրային զինծառայողների, Արցախի պատերազմից տուժած, տեղահանված, բազմազավակ և բազմանդամ, սոցիալապես անապահով, հաշմանդամություն և այլ խնդիրներ ունեցող ընտանիքներ, ուսումնասիրել է նրանց կարիքները, խնդիրների լուծման ուղղությամբ ցուցաբերել աջակցություն:
- ✓ Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ կատարել է համատեղ տնային այցելությունների վերլուծություն և քննարկում, սովել եզրակացություններ, ներկայացրել զեկուցագրեր:

Բաժինը մասնակցել է

- ✓ Արենի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (ԽՀՀ) 3 նիստի` ամուսնալուծվող ընտանիքի անչափահաս երեխայի հետագա խնամքին, դատարան տրամադրվող եզրակացության քննարկմանը և ընտանեկան տարաձայնություններ ունեցող ընտանիքում երեխաների կրթության իրավունքի իրացման հարցի քննարկման,
- ✓ Եղեգնաձորի համայնքապետարանի աջակցող ցանցի 4 նիստի` Մալիշկա բնակավայրից մանկուց հաշմանդամ երեխային հատուկ, մասնագիտացված հաստատությունում տեղավորելու (2 նիստ), Մանկական զարգացման հիմնադրամի և Եղեգնաձորի համայնքապետարանի համագործակցությամբ իրականացվող «Հասանելի

սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում շահառու ընտանիքի ընտրության, Վերնաշեն բնակավայրից կրթությունից խուսափող անչափահասին հանրակրթություն վերադարձնելու հարցերի քննարկմանը,

✓ Եղեգնաձորի համայնքապետարանում՝ Գլաձոր բնակավայրի անհայտ կորած զինծառայողի ընտանիքի սոցիալական խնդիրների քննարկմանը,

✓ Վայք համայնքի ԽՀՀ 2 նիստի՝ երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրացման, ծնողի հետ շփումն ապահովելու հարցի քննարկմանը,

✓ 4 անչափահասի հետ տարվող քննչական գործողությունների,

✓ Ջերմուկ համայնքի Գնդեվազի միջնակարգ դպրոցում՝ աշակերտի կողմից կատարված գողության դեպքի վերաբերյալ մարզի դատախազի միջնորդագրի քննարկմանը:

✓ Հարցը քննարկվել է նաև Ջերմուկի համայնքապետարանի, միասնական սոցիալական ծառայության Ջերմուկի տարածքային կենտրոնի, Ջերմուկի <<Զարման>> երեխաների աջակցության կենտրոնի հետ: Անչափահասն ուղղորդվել է աջակցության կենտրոն, որտեղ մասնագիտական թիմն իրականացրել է սոցիալական վերականգնմանն ուղղված միջոցառումներ:

✓ Բաժինն իրականացրել է համատեղ աշխատանք ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի բաժինների անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման խմբերում (ԱԳ և ԸԲԿԽ) պրոֆիլակտիկ քարտային հաշվառման վերցված իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների, բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքների հետ: Կատարվել են այցելություններ ընտանիքներ, տարվել բացատրական, սոցիալ-հոգեբանական աշխատանքներ՝ կրկնակի իրավախախտումները և բռնության դեպքերը կանխարգելելու, ընտանեկան տարաձայնությունների լուծման, ընտանիքում հաշտության վերականգնման ուղղությամբ: Ըստ ոստիկանության բաժինների տեղեկատվության՝ տարեվերջի դրությամբ հաշվառվման մեջ է գտնվել 6 անչափահաս իրավախախտ, գրանցվել է բռնության 21 դեպք, որից 2-ը՝ անչափահասի նկատմամբ:

Մշտադիտարկման արդյունքում հաշվառված անչափահասների կողմից կրկնակի իրավախախտումներ չեն գրանցվել:

Բաժինը կատարել է

✓ Եղեգնաձոր (3 երեխա, որից մեկն ուղղորդվել է հատուկ կարիք ունեցող երեխաների մասնագիտացված հաստատություն, երկուսի նկատմամբ սահմանվել է հոգաբարձություն), Վայք (3 երեխա՝ որից 2-ի նկատմամբ սահմանվել է հոգաբարձություն, 1-ին՝ խնամակալություն), Ջերմուկ (3 երեխա՝ որից 2-ի նկատմամբ սահմանվել է խնամակալություն, 1-ի նկատմամբ՝ հոգաբարձություն) համայնքների առանց ծնողական խնամքի մնացած 9 երեխայի կենսապայմանների ուսումնասիրություն, տարածքային հաշվառում, փաստաթղթերի ներկայացում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

✓ Շարունակական աշխատանք՝ <<Նորք>> տեղեկատվական բազայի հետ՝ համակարգ է ներմուծել սվյալներ 91 երեխայի վերաբերյալ, վկայագիր է տրամադրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 55 երեխայի,

✓ Այցելություն Ջերմուկ համայնքի բնակիչներ, որդեգրելու ցանկություն հայտնած ամուսինների ընտանիք՝ կենսապայմանների ուսումնասիրման, տարածքային հաշվառման նպատակով,

✓ Մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի ուսումնասիրություն, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, կազմակերպել գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստեր, թարմացրել հանձնաժողովի կազմը, քննարկել օրակարգային հարցեր, միջոցներ ձեռնարկել բռնության ենթարկված կանանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ,

✓ Երեք և ավելի անչափահաս երեխաներ ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների, խնամքի հաստատություններ ուղղորդված, ներառական կրթություն ստացող, մանկուց հաշմանդամ և ձեռքբերովի հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ շտեմարանի թարմացում,

✓ Աշխատանք խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած քաղաքացուն հաշվառելու ուղղությամբ,

✓ Աշխատանք խնամքի հաստատությունում գտնվող երեխայի ընտանիքի հետ՝ կենսաբանական ընտանիք վերադարձի ուղղությամբ,

✓ Աշխատանք կրթությունից խուսափող երեխաների և նրանց ընտանիքների հետ՝ երեխաներին հանրակրթություն վերադարձնելու ուղղությամբ (Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայր, Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն և մալիշկա բնակավայրեր, Վայք համանքի Ագատեկ բնակավայր):

✓ Բաժինն աջակցել է ծննդյան վկայական չունեցող երեխայի ծնողին՝ երեխայի վկայական ձեռքբերելու գործում:

✓ Սերտորեն համագործակցել է միջազգային բարեգործական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների հետ, աջակցել մարզում իրականացրած հումանիտար ծրագրերին և նախաձեռնություններին:

Մասնավորապես կատարել է կազմակերպչական աշխատանք՝

✓ «Դիակոնիա» ԲՀ-ի հետ՝ մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սննդի աջակցության ծրագրի շրջանակում, մասնակցել Վայք համայնքում հիմնադրամի կողմից սննդի բախշման աշխատանքներին:

✓ Խնամակալության և հոգաբարձության մարմինների և «Իրավունքի ուժ» ՀԿ-ի հետ՝ Երևանում և Աղվերանում ԽՀՀ-ի անդամների մասնակցությունը երկօրյա դասընթացին ապահովելու գործում:

✓ Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի հետ՝ Եղեգիսի <<Արևի>> հյուրանոցում սոցիալական ոլորտի մասնագետների մասնակցությունը դասընթացին ապահովելու հարցում:

Բաժինը մասնակցել է նաև

✓ Մարզպետարանում և Եղեգնաձորի համայնքապետարանում մասնագետների մրցույթների անցկացմանը,

- ✓ Ջերմուկ քաղաքում «Սոսե» կանանց հիմնահարցեր» ՀԿ-ի նախաձեռնությամբ գեղերային հիմնահարցերի շուրջ կազմակերպված կլոր սեղան քննարկմանը,
- ✓ Մարզպետարանում՝ միգրանտների ներուժի օգտագործմանն ուղղված դրամաշնորհային ծրագրի մեկնարկին նվիրված հանդիպմանը,
- ✓ «Առաքելություն Հայաստան» ԲԿ-ի ներկայացուցիչների հետ հանդիպմանը՝ մարզի անձր հաստատող փաստաթուղթ չունեցող քաղաքացիների աջակցությանն ուղղված ծրագրի շրջանակում,
- ✓ Վայք քաղաքում՝ «ՕքսեՋեն» հիմնադրամի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի համատեղ կազմակերպած միջոցառում-քննարկմանը,
- ✓ «<Սահմանափակ երիտասարդների ներուժի բացահայտում>> ՀԿ-ի նախաձեռնությամբ կայացած աշխատաժողովին,
- ✓ Ջերմուկի ՄՄԾ-ի նախաձեռնությամբ կազմակերպված սոցիալական աշխատողի օրվան նվիրված միջոցառմանը,
- ✓ Երևան քաղաքում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից կազմակերպված «Ազգային հարմարվողականության ծրագրի հաղորդակցման ռազմավարության» դասընթաց- աշխատաժողովին,
- ✓ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տկն. Անն Լույոյի հետ հանդիպմանը Վայոց ձորի մարզպետարանում,
- ✓ ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերի միջև առևտրա-տնտեսական, կրթական, սոցիալական և հումանիտար համագործակցության շրջանակներում Վայոց ձոր ժամանած ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակության հետ հանդիպումներին,
- ✓ Հայ օգնության ֆոնդի «<Երեխաների աջակցության կենտրոն>> հիմնադրամի կողմից Խնամատար ընտանիքների գնահատանքի միջոցառմանը,
- ✓ «Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիայի» նախաձեռնությամբ կազմակերպված «Աջակցություն ընտանիքներին ճգնաժամային իրավիճակներում», «Երեխան և ճգնաժամը», «Ճգնաժամային միջամտություն», «Բռնությունը որպես ճգնաժամային իրավիճակ», «Աջակցություն կրթական միջավայրում՝ ճգնաժամի պարագայում», «Ճգնաժամային խորհրդատվություն», ինչպես նաև «<Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն >> ՀԿ –ի նախաձեռնությամբ բռնության թեմաներով կազմակերպված առցանց քննարկումներին, «Վերականգնումը COVID-19-ից հետո» թեմայով վեբինարին:
- ✓ Զոհված զինձառայողների մայրերին և կանանց նվիրված տոնական ընդունելությանը ՀՀ Վարչապետի կեցավայրում,
- ✓ Մարզպետարանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) Գորիսի ենթապատվիրակության ղեկավարի հետ հանդիպմանը,
- ✓ Մարզպետարանում «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի» հերթական նիստերին,
- ✓ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմակերպած սեմինարին,

- ✓ Իրականացրել է համատեղ աշխատանք Մանկական զարգացման հիմնադրամի Վայոց ձորի տարածքային կենտրոնի հետ՝ մարզում իրականացրած կրթական, բարեգործական ծրագրերի շրջանակներում,
- ✓ Կատարել է Արցախից տեղահանված 18-24 տարեկան, մասնագիտություն ձեռք բերելու ցանկություն հայտնած 3 քաղաքացու ուղղորդում բարեգործական կազմակերպություն՝ ուսուցման կազմակերպման և աշխատանքով ապահովելու նպատակով:
- ✓ Բաժինը համագործակցել է «Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն ՀԿ-ի հետ՝ տարաձայնություններ ունեցող և ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց ընտանիքներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ:
- ✓ Բաժինը մասնակցել է Արենի և Եղեգիս համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին:
- ✓ Բաժինը կատարել է ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և քննարկում:

Բաժինը ներկայացրել է՝

- ✓ Երեխայի իրավունքների պաշտպանության 2022 թվականի տարեկան միջոցառումների ծրագրով նախատեսված կիսամյակային հաշվետվություններ ՀՀ վարչապետի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
- ✓ Տեղեկատվություն ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարություն՝ ԱՄՆ պետդեպարտամենտի հարցաշարի շրջանակում հավասար իրավունքներին, կանանց, երեխաներին, ընտանեկան բռնությանն առնչվող հարցաշարի վերաբերյալ,
- ✓ Տեղեկատվություն ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի մարզպետարանի իրավասության շրջանակում կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ,
- ✓ Տեղեկատվություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ ՄԱԿ-ի ԿԶՆ-17 ցուցիչի վերաբերյալ,
- ✓ 2023 թվականի ԸԿԵԻՊ բաժնի տարեկան աշխատանքային ծրագիր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ✓ Տարեկան հաշվետվություն՝ ԸԿԵԻՊ բաժնի 2021 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքի համար,
- ✓ Տեղեկատվություն՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններ՝ ՀՀ-ում զենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ.. ռազմավարական ծրագրի շրջանակում 2021 թվականի ընթացքում մարզում կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության կողմից 2022 թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 231013.0 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 189537հա, այդ թվում վարելահող՝ 15900.3հա, բազմամյա տնկարքեր՝ 2325.9հա (պտուղ-1181.7հա, խաղող-1144.1հա), խոտհարքեր՝ 5039.2հա, արոտ՝ 92222.1հա, այլ հողատեսքեր՝ 74049.8հա: Մարզում ոռոգվող հողերը կազմում են ընդամենը 7211.1 հա կամ 3.8% :

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող 79.65հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություններ՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ Արենի համայնքում 48.6հա (արոտը և այլ հողատեսքը), Եղեգնաձոր համայնքում 29.05հա, Վայք համայնքում 3.0հա, Ջերմուկ համայնքում 5.0հա փոխադրվել և անցել են բազմամյա տնկարքերի տակ, Եղեգիսի համայնքում 2.2 հա արոտը փոխադրվել է խոտհարքի՝ հետագայում պտղատու այգի հիմնելու նպատակով:

Որոշման կարգի համաձայն կատարվել է նաև բարձրարժեքից - ցածրարժեք հողատեսքերի փոփոխություններ՝ Արենի համայնքից՝ Ելփինի բնակավայրի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 9.2505հա ջրովի վարելահողերը, Աղավնաձոր և Չիվա բնակավայրի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 1.8081հա պտղատու այգիները, Արենի բնակավայրից համայնքային սեփականություն հանդիսացող 0.48962հա խաղողի այգին և Աղավնաձորի բնակավայրից իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0.13797հա վարելահողը փոխադրվել են ցածրարժեք հողատեսքերի՝ անջրդի ու ջրովի վարելահողերի և խոտհարքերի, Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 1.1հա վարելահողը փոխադրվել է խոտհարքի, իսկ Եղեգնաձոր համայնքի 0.66985հա քաղաքացիների և 1.1973հա իրավաբանական անձանձ սեփականություն հանդիսացող վարելահողերը փոխադրվել է խոտհարքերի: Նշված փոփոխությունները կարծածվեն մարզի 2023 թվականի ամփոփ հողային հաշվեկշռում: Գործընթացը շարունակվում է:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացվել, համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում, հողերի նպատակային նշանակության փոփոխության 18 առաջարկություն, որից 8-ին հանձնաժողովը տրվել է դրական եզրակացություն, որն էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքներ, իսկ 10-ը ընթացքի մեջ են:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված

կարգի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 0.04286հա տարածքի օտարման առաջարկություն, որն ընթացքի մեջ է:

Ուսումնասիրվել և օրինականություններն են ստուգվել հողային հարաբերությունների բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի և ավագանու) կողմից ընդունված որոշումները:

Հետևողականություն է հանդես բերվել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալության տրամադրման աշխատանքներն իրականացվեն ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ՝ 1-ը հունվարի 2023թ. օտարվել է 131.15հա, որի ընդհանուր գումարը կազմել է 105.267 միլ. դրամ, վարձակալական հիմունքներով օգտագործման է տրամադրվել 37948.77հա, որի վարձավճարը կազմել է 46.956 միլ. դրամ:

Բաժինը դիմումներ է ստացել 16 քաղաքացիներից, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք է տվել:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԿԱ ԿԱՏԱՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 2022թվականի աշխատանքային ծրագրի վերլուծություն, 2023թվականի աշխատանքային ծրագրի կազմում, կիսամյակային գնահատված կատարողականների հավաքագրում և արդյունքների ամփոփում

Հավաքագրվել է քաղաքացիական ծառայողների 2021 թվականի երկրորդ կիսամյակի և 2022 թվականի առաջին կիսամյակի կատարողականների արդյունքները, ամփոփվել և ներկայացվել է հաշվապահություն:

Մարզպետարանի 2022 թվականի երկրորդ կիսամյակի և 2021 թվականի առաջին կիսամյակի կատարողականների արդյունքներն ամփոփվել և համապատասխան ձևաչափով ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:

Աջակցություն է ցուցաբերվել վարչություններին 2023 թվականի աշխատանքային ծրագրերի կազմման, փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրման աշխատանքներին: Կազմվել է մարզպետարանի 2023 թվականի նախնական աշխատանքային ծրագիրը և ներկայացվել վարչապետի աշխատակազմ: Ծրագիրը համադրվել է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված միջոցառումների հետ:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրենների և անձնակազմի աշխատակիցների անձնական գործերի վարում, տեղեկատվության տրամադրում և տեղեկատվական հարթակի վարում: Քաղաքացիական ծառայողների գրանցամատյանի և կադրերի ռեգերվի վարում ընդհանուր տեղեկատվական հարթակում

Թարմացվել են մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրենների և մարզպետարանի անձնակազմի աշխատակիցների անձնական գործերը, համապատասխան փոփոխությունները ներառվել են: Քաղաքացիական ծառայության օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվությունը սահմանված ժամկետում տրամադրվել է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ:

Յուրաքանչյուր ամսվա ավարտին տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն տեղեկատվություն է տրամադրվել Վայոց ձորի մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

Նոր աշխատանքի ընդունվողների սոցիալական փաթեթի շահառու դառնալու վերաբերյալ տվյալներ են տրամադրվել ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը:

Բարձրաստիճան պաշտոնյաների աշխատանքի ընդունվելուց կամ ազատվելուց տեղեկատվություն է տրամադրվել կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Խորհրդատվություն է տրամադրվել հայտարարատու պաշտոնատար անձանց:

Բաժինը մասնակցում է մարզպետարանի հաստիքացուցակի կազմման աշխատանքներին, կատարում տարվա ընթացքում աշխատանքային ստաժի հետ կապված փոփոխությունները, ներկայացնում որոշումների նախագծերը:

Բաժինը վարում է անցակետի կառավարման՝ հաճախումների հետ կապված ծրագիրը, կատարվում է ամենօրյա մշտադիտարկում՝ աշխատակիցների աշխատանքային ժամերի հաշվառում և յուրաքանչյուր ամսվան հաջորդող աշխատանքային օրը ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժին է ներկայացվում նախորդ ամսվա հաճախացուցակը:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշումների, գլխավոր քարտուղարի հրամանների, պաշտոնի անձնագրերի, պայմանագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի պատրաստում

քարտուղարի 438 հրամանի նախագիծ: Անձնակազմի կառավարման բաժնի գործունեության հետ կապված մարզպետի որոշումների նախագծերը, որոնք առնչվում են մրցույթներին, աշխատանքի նշանակմանը, ազատմանը, խրախուսանքներին, կարգապահական տույժերին, արձակուրդներին ներկայացվել են վիզավորման, այնուհետև հաստատման և հանձնվել քարտուղարության ընդհանուր բաժին հաշվառման:

Կնքվել են աշխատանքային պայմանագրեր նոր աշխատանքի ընդունվողների հետ, համաձայնագրերով երկարացվել են պայմանագրերի գործողության ժամկետները: Անհրաժեշտությունից ելնելով կատարվել են փոփոխություններ պաշտոնների անձնագրերում և ներկայացվել համաձայության և հաստատման:

4. Մարզպետարանի ենթակայության առողջապահական, մշակութային կազմակերպությունների տնօրենների և մարզպետարանի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացում: Վարկանիշային ցուցակներից ընտրված անձանց հետ հարցազրույց վարելու նախապատրաստական աշխատանքների իրականացում

2022 թվականի նոյեմբերին անցկացվել է Մարզպետարանի ենթակայության մշակութային ՊՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնների մրցույթների նախապատրաստական աշխատանքներ, կազմվել և մուտքագրվել են թեստավորման և հարցազրույցի փուլի հարցաշարերը:

2022 թվականի մայիսին «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվել է 3 /երեք/ տարի ժամկետով:

Իրականացվել է թվով 8 քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթների նախապատրաստական աշխատանքներ՝ կազմվել են թեստավորման և հարցազրույցի փուլի հարցաշարերը, տրվել է հայտարարություններ և ըստ անհրաժեշտության տրամադրվել է տեղեկատվություն՝ կայք էջում զետեղելու և վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակ: Մրցույթների արդյունքում 6 քաղաքացիական ծառայության պաշտոններ համալրվել են: Մարզպետարանի կայքում 2 անգամ հրապարակվել է փորձագետի ներգրավման հայտարարություն, որի արդյունքում կնքվել է պայմանագիր դիմորդի հետ 6 ամիս ժամկետով:

5. Վերապատրաստումների, գործուղումների գործընթացի կազմակերպում և իրականացում

Տարեսկզբին 2021 թվականի 2 կիսամյակների կատարողականների արդյունքների հիման վրա որոշվել են 2022 թվականին պարտադիր վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողները:

Կատարվել է վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատում վերապատրաստվողի և իր ղեկավարի կողմից: Մարզպետարանի վերապատրաստման ծրագիրը ներկայացվել է քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնության և այնուհետև գլխավոր քարտուղարի հաստատման:

2022 թվականին վերապատրաստվել են թվով 7 քաղաքացիական ծառայողներ մասնագիտական և կոմպետենցիաների ուղղությամբ:

Մարզպետարանի աշխատակիցները տարբեր մարմիններ գործուղումների են մեկնել նախապես ներկայացված պաշտոնական հրավերների կամ օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտությունից ելնելով:

Գործուղումները ձևակերպվել են հրամանով և գործուղման թերթիկով: Գործուղումից վերադառնալուց հետո աշխատակիցները ներկայացրել են հաշվետվություն:

6. Մարզպետարանի բարեվարքության համակարգի աշխատանքների համակարգում

Մրցույթների անցկացման նախապատրաստական փուլում մրցույթների մասնակիցները հայտարարություն են ներկայացրել բարեվարքության հետ կապված՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների (ձեռնարկատիրական գործունեության, այլ վճարովի աշխատանք) վերաբերյալ: Մրցույթի արդյունքում պաշտոնի նշանակված քաղաքացիական ծառայողների վերաբերյալ պահանջվել է դատվածության բացակայության մասին տեղեկանք:

Մարզպետարանում բարեվարքության համակարգի հետ կապված խախտումներ չեն արձանագրվել:

Բարեվարքության հարցերով կազմակերպիչը հանդիսանում է նաև հայտարարագրման պատասխանատու:

7. Քաղաքացիների դիմում-բողոքների քննարկում

Քաղաքացիների դիմումներում բարձրացված հարցերը կապված են աշխատանքի պահանջի հետ և ըստ պատշաճի գրավոր հարցմանը տրվել է գրավոր պատասխան:

Եղել են նաև շատ բանավոր հարցումներ, կապված հիմնականում քաղաքացիական ծառայության պաշտոնների մրցույթով համալրման և վարկանիշային ցուցակներում ընդգրկվելու հետ կապված:

Մարզպետարանի աշխատակիցների առաջին իսկ պահանջի դեպքում տրվել է իրենց անձնական գործի (տվյալների) հետ կապված փաստաթղթի պատճենը կամ տեղեկանքը աշխատանքային գործունեության վերաբերյալ պահանջվող ձևաչափով և բովանդակությամբ:

Բաժնի աշխատակիցները 2022 թվականին օգտագործել են իրենց ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները:

Վայոց ձորի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2022 թ. կատարված աշխատանքների մասին

2022 թվականի ընթացքում մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառույթների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի գործունեության հրապարակայնությունն ապահովելու նպատակով լուսաբանումն իրականացվել է. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի <<Նորություններ>> բաժնում տեղադրված նյութերով, ֆեյսբուքյան էջով և մարզպետարանի գործունեությունը լուսաբանող հաղորդագրություններով:

2022թ. ընթացքում բաժնում տեղադրվել է 303 լուսաբանական նյութ, որոնք եղել են լրատվական բնույթի հաղորդումներ, ուղերձներ, հայտարարություններ և իրազեկումներ:

Լուսաբանական նյութերն արտացոլել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեությունը, մարզային ենթակայությամբ գործող կազմակերպությունների հետ տարվող աշխատանքները, մարզի տարբեր համայնքներ կատարած աշխատանքային այցերը, համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուղարձը:

Լուսաբանվել են նաև ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները:

<<Նորություններ>> բաժնում տեղադրվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և մարզի համայնքապետարանների կողմից կատարված աշխատանքների և իրականացված միջոցառումների վերաբերյալ իրազեկման, լուսաբանման և այլ բնույթի նյութեր:

Հաշվետու ժամանակահատվածում <<Տեղեկատվական կենտրոն>> բաժնում համապատասխան նյութերով համալրվել են <<Ուղերձներ, կոչեր, հայտարարություններ>>, <<Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ>> ենթաբաժինները:

Բաժնի կողմից համակարգվել են նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջի աշխատանքները:

Պաշտոնական կայքէջի այլ բաժինների սպասարկման մասին

Մշտապես՝ ըստ անհրաժեշտության, թարմացվել են Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի 19 բաժիններն իրենց 112-ից ավելի ենթաբաժիններով:

Տարվա ընթացքում Վայոց ձորի մարզպետարանի կայքէջում հրապարակվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի ընդունած որոշումները, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները, մարզպետարանի գործունեության տարեկան աշխատանքային ծրագիրը և պարտադիր հրապարակման ենթական այլ իրավական նյութերը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության, նրանց կողմից գրաված դիմումների, վերաբերյալ տվյալները տեղադրվել են <Քաղաքացիների ընդունելություն բաժնի> <Ընդունելություն արդյունքներն ամսական կտրվածքով>> ենթաբաժնում:

2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած ՏԻՄ ընտրություններով պայմանավորված, փոփոխություններ են կատարվել կայքէջի <<Համայնքներ>> բաժնի <<Համայնքի մասին>> և << Համայնքի ղեկավար և ավագանի>> ենթաբաժիններում և բացվել է նոր ենթաբաժին <<ՀՀ Վայոց ձորի մարզի խոշորացված համայնքները և նրանց կազմում ընդգրկված բնակավայրերը>> անվանումով և համալրվել:

Հանրային իրազեկում ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը համագործակցել է զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների հետ:

Պաշտոնական կայքէջում ըստ համապատասխան բաժինների և էջերի տեղադրվել են պարտադիր հրապարակման ենթակա ամբողջ տեղեկատվությունը, մարզպետարանի գործունեությանն առնչվող նորությունները:

Ծանոթանալու համար հղում կատարել հետևյալ էլեկտրոնային հասցին՝ <http://vdzor.mtad.am/TAorenq7/> :

Ըստ անհրաժեշտության պաշտոնական կայքէջում բացվել է <<Ազդարարման ազդանշանները և դրանց հետ կապված միջոցառումները>> անվանումով բաժին, ինչիսես նաև <<Հայտարարություններ>> բաժնում բացվել է <<Մրցույթների թեստավորման և հարցազրույցի արդյունքներ>> անվանումով ենթաբաժին և համալրվել նյութերով:

Հաշվետու ժամանակահատվածում վերախմբագրումներ են կատարվել պաշտոնական կայքէջի <<Մարզպետարան>>, <<Համայնքներ>>, <<Հայտարարություններ>>, <<Հղումներ>>, <<Ծրագրեր և փաստաթղթեր>>, <<Կայքի քարտեզ>>, <<Դիմեք մեզ և տեղեկատվության ազատություն>> բաժինների ենթաբաժիններում:

Ըստ անհրաժեշտության թարմացվել են <<Դիմեք մեզ և տեղեկատվության ազատություն>> բաժնի <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենք, 7-րդ հոդված՝ տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովում>> ենթաբաժնի 2-րդ, 4-րդ և 11-րդ կետերով պահանջվող տեղեկությունները:

Վայոց ձորի մարզպետարանին ուղղված հարցումներին տրված պատասխանների և բողոք դիմումների վերաբերյալ

2022 թվականի ընթացքում ՋԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին արվել է 21 գրավոր հարցում, որոնց բոլորին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրվել են պատասխաններ: Հարցումները և պատասխանները տեղադրվել են մարզպետարանի կայքէջում:

2022 թվականին Վայոց ձորի մարզպետարան հասցեագրված տեղեկություն ստանալու 21 գրավոր հարցումները եղել են.

- լրագրողների՝ 8
- հասարակական կազմակերպություններից՝ 8
- ՀՀ քաղաքացիներից՝ 1
- Ուսանողներից՝ 2
- փաստաբանների պալատից՝ 1
- հիմնադրամներից՝ 1

Տեղեկություն ստանալու 21 գրավոր հարցումներից 4-ի դեպքում մերժվել է տեղեկության տրամադրումը, ներքոնշյալ հիմքերով՝

- 2-ը՝ անձնական տվյալների պաշտպանության
- 1-ը՝ անվտանգային խնդիրների:
- Մեկ հարցման պատասխանը մերժվել է տեղեկատվության տնօրինող չլինելու հիմքով և տեղեկատվությունը տնօրինողին դիմելու ուղղորդումով:

2022 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզպետարան հասցեագրված գրավոր հարցումների թիվը 2021-ի համեմատ նվազել է 4-ով:

Բազմաթիվ բանավոր հարցումներ են արվել մարզպետարանի տարբեր ստորորժամումներին, որոնց պատասխանները տրվել են նույն պահին կամ եղել են հարցի պատասխանը ստանալու համար այլ հասցեով դիմելու ուղղորդումներ:

Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմում-բողոքների վերաբերյալ 2022 թվականի վերաբերյալ տեղեկանքները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

